18 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2001 ՀԻՆԳՇԱԲԹԻ 189 (2393)

Azg

armenian daily

Աբխազիան բացառում է ամեն տեսակի ինքնավարություն Վրաստանի կազմում

ՍՈՒԽՈՒՄ, 17 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ. Աբխազական ԱԳՆ ղեկավար Սերգեյ Շամբան բացառում է հանրաքվեի լայն ինքնավարությունը Վրաստանի կազմում, հաղորդում է «Ինտերֆաքս»: Երկուշաբթի Շամբան, մեկնաբանելով այդ հարցով Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեի արտահայտությունները, ասել է. «Աբխազիայի ոչ մի տեսակի լայն ինքնավարության մասին Վրաստանի կազմում խոսք չի կարող լինել: Աբխազիայի ղեկավարությունը այդ հարցը Թբիլիսիի հետ նույնիսկ չի քննարկի: Մենք կարող ենք խոսել միայն միջպետական հարաբերությունների մասին, իսկ ամբողջ մնացյալը կհակասի Աբխազիայի սահմանադրությանը»: Միեւնույն ժամանակ Աբխազիայի ԱԳՆ ղեկավարը պարզաբանել է, որ 1997 թվականին Վրաստանը հրաժարվեց հանրաքվեյի հետ ստորագրել համադաշնակցային պայմանագիր: «Դրանից հետո Աբխազիայում անցկացվեց հանրաքվե, եւ բնակչության գերակշիռ մեծամասնությունը արտահայտվեց հօգուտ աբխազական պետության անկախության», ասել է ԱԳՆ ղեկավարը:

ԱՇԱԲԵԿՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԸ

Ադրբեջանցիները աֆղան վարձկաններին անվանում էին «առանձնահատուկ կոնտինգենտ»

ԼԻԼԻԹ ԳԲԻԳՈՐՅԱՆ

«Տեղ հասած աֆղան զինվորներով 522 մարդ, 1993-ի օգոստոսի 16-ից համալրել Ադրբեջանի զինված ուժերի 160-րդ զորամասը նրանց համար ստեղծելով բոլոր պայմանները»: Սա Ադրբեջանի զինված ուժերի 200-րդ զորամասի շտաբի պետ գեներալ-մայոր Սադիկովի 1993-ի օգոստոսի 26-ի հրամանագիրն է 160-րդ զորամասի հրամանատարին:

Ընդհանուր առմամբ, **«Ազգի»** տրամադրության տակ եղած փաստաթղթերի համաձայն, 1993-ի օգոստոս-սեպտեմբերին ղարաբաղյան պատերազմում ադրբեջանական բանակը համալրվել է առնվազն 1350 աֆղան վարձկաններով: Նշված 522-ից հետո աֆղանցիների եւս երկու 437 եւ 453 հոգանոց խումբ է ժամանել Ադրբեջան: Նրանց կցելով պարսկերենի իմացությամբ շուրջ 50 ադրբեջանցի սպաների տեղակայել են ադրբեջանական բանակի հատկապես 160 եւ 200-րդ զորամասերում՝ Գերանում եւ Գյանջայում:



Այսպես, 522 աֆղան վարձկանների կատարմամբ, որոնք ադրբեջանական փաստաթղթերում հիշատակվում են որպես մոջահեդներ, 160-րդ զորամասի հրամանատար Մամեդովը հրաման է ստորագրել. «Զինվորական ծառայության մասին Ադրբեջանի Հանրապետության գործող օրենքի համաձայն ներքոհիշյալ սպաներին կանչել զինվորական ծառայության եւ նշանակել համապատասխան պաշտոններ»:

Ադրբեջանական բանակի ղեկավարությունն աֆղան վարձկանների մասին հանձնարարականներ ծեւակերպելիս նրանց անվանում է «առանձնահատուկ կոնտինգենտ»:

Տես էջ 2

ՍՏՈՒԳԱՅՑ

Տնտեսության զարգացման միտումներ Շիրակի մարզում

ՄԱՌԼԵՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հոկտեմբերի 17-ին Շիրակի մարզ կատարած այցի ընթացքում ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանն ունեցավ մի շարք հանդիպումներ, եղավ մարզի որոշ ձեռնարկություններում: Կարտոֆիլագործների հանրապետական ասոցիացիայի Շիրակի մարզի պահեստային համալիրը, ուր այցելեց ՀՀ նախագահը, ժամանակակից սարքավորումներով հագեցած միակ պահեստային համալիրն է Հայաստանում, որը ստեղծվել է Հոլանդիայի կառավարության միջոցներով: Հայ-հոլանդական ծրագրի շրջանակներում Հայաստան է ներկրվել եւ ածեցվում են բարձր բերքատվություն ունեցող կարտոֆիլի տեսակներ: Իսկ պահեստային համալիրում հնարավոր է պահել 1500 տոննա կարտոֆիլի տնկանյութ:

ՀՀ նախագահն այցելեց Ախուրյանի «Տիկնայք» կարի ֆաբրիկա: 1997 թ.-ից գործարկված ամերիկյան AMEREX ֆիրմայի այս ձեռնարկությունում կարած բաճկոնների հումքը ներմուծվում է ԱՄՆ-ից, արտադրանքը նույնպես արտահանվում է Մ. Նահանգներ: Ֆաբրիկայում աշխատում է 150 մարդ՝ 15–20 հազար դրամ միջին աշխատավարձով:

Նախագահի այցելած ձեռնարկությունների շարքում էր նաեւ «Տավրոս» կոշիկի ֆաբրիկան, որի արտադրանքը առաքվում է Ռուսաստան եւ ԱՄՆ: Ըստ ֆաբրիկայի տնօրեն Կարապետ Մովսիսյանի, ձեռնարկությունն այսօր մի շարք խնդիրներ ունի եւ ակնկալում է նախագահ Քոչարյանի աջակցությունը դրանք լուծելու հարցում: Ըստ ֆաբրիկայի տնօրենի, իրենց աշխատանքներին խոչընդոտում են էլեկտրաէներգիայի մատակարարման անհասկանալի խափանումները, մինչդեռ ձեռնարկությունը բարեխղճորեն վճարում է դրա դիմաց ունեցած պարտքերը: Բացի դրանից, հանրապետություն ներկրված անորակ կոշկեղենը տեղական շուկայում ֆաբրիկայի աշխատանքի իրացման համար խոչընդոտներ է ստեղծում: Այսօր ձեռնարկությունն աշխատում է՝ աղահովելով 60-ից ավելի աշխատատեղ եւ միտում ունի ընդլայնվելու:

Մանվածքային ֆաբրիկան նախագահի այդ օրը այցելած վերջին ձեռնարկությունն էր:

Տես էջ 2

ԱՄՆ-ը չի պատշտպանի «հակահաբեկչական» գործողությունն ընդդեմ հայերի

ԲԱՔՈՒ, 17 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Մինչեւ երեկ ադրբեջանական մամուլում վիճաբանության նյութ հանդիսացող կենտրոնական թեմաներից մեկը «գրավյալ» ադրբեջանական հողերում հակահաբեկչական գործողություն իրականացնելու հնարավորությունն էր: Այդ գաղափարը մտկվել էր տխրահռչակ «չորսի հռչակագրում»: Աֆղանստանում ԱՄՆ-ի ձեռնարկած հատուցման գործողությունը օրախնդիր դարձրեց այդ գաղափարը: Պարզվեց, որ հայ «նախահարձակների» դեմ ուժ գործադրելու կողմնակիցները բավականին շատ են, թեեւ հոռետեսական արտահայտություններն էլ էին բավականաչափ:

Հռչակագրի մտակողներից մեկը՝ նախագահ Հ. Ալիեւի նախկին օգնական, ներկայումս անկախ քաղաքագետ էլդար Նամազովը, «Բիլիք դունյասի» գործակալության թղթակցի հետ հարցազրույցի ժամանակ նույնիսկ ցնդել էր, թե առաջարկված փաստաթուղթը սկզբունքորեն պատշտպանվում է երկրի ղեկավարության կողմից:

Այդ համապատկերի վրա առավել եւս անսպասելի էր հոկտեմբերի 16-ին Ադրբեջանում ԱՄՆ-ի դեսպան Ռոս Վիլսոնի արած հայտարարությունը: ԱՄՆ-ը հանդես է գալիս հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման հարցում ամեն կարգի ուժային գործողության դեմ, ընդգծել է նա ԱՆՍ անկախ հեռուստաալիքին տված հարցազրույցի ժամանակ: ԱՄՆ-ը բարձր է գնահատում եւ հավանություն տալիս խաղաղ բանակցություններին, որ վարում է Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւը, ասել է դեսպանը:

Ռ. Վիլսոնի ելույթը սառը ցնցուղ էր ոչ միայն մի շարք ընդդիմադիր ուժերի, այլեւ, պետք է ենթադրել, հեղինակների այն հայակի համար, որոնց գործողությունները շատերը շաղկապում էին կառավարող շրջանների թաքուն հաղթականության հետ: Այդ բանավեճում վերջակետը դրել է նախագահ Հ. Ալիեւն ինքը, որը, ընդունելով Ուկրաինայի արտաքին գործերի նախարար Անատոլի Զլենկոյին, հայտարարել է. «Ռազմական գործողությունները վերսկսելը դժվար չէ: Սակայն դա ինչքանո՞վ է նպատակահարմար, հատկապես ներկայումս»:

Սերժ Սարգսյանի հանդիպումները Չինաստանում

Շարունակվում է Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի պաշտոնական այցը Չինաստանում:

Հոկտեմբերի 16-ին Սերժ Սարգսյանը հանդիպել է Չինաստանի ազգային պաշտպանության նախարար գեներալ-գնդապետ Չի Խաոտյանի հետ: Նախարարները քննարկել են պաշտպանության բնագավառում հայ-չինական համագործակցության ամրապնդմանն ու զարգացմանն առնչվող խնդիրներ:

Հոկտեմբերի 17-ին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին ընդունել է Չինաստանի ժողովրդական ներկայացուցիչների համաչինական խորհրդի նախագահի տեղակալ Խու Չինտաոն: Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի եւ Չինաստանի միջեւ տարբեր բնագավառներում հարաբերությունների ներկա մակարդակն ու հեռանկարները:

ՀՀ ՊՆ ԼՐՏԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ոչ թե գեներալ Մանվել, այլ գեներալ Միխայել Գրիգորյանն է այցելում Կիպրոս

Երեկվա մեր համարում Կիպրոսում լույս տեսնող «Սայփրուս ուիքլի» շաբաթաթերթի խմբագիր Ջորջ Տեր-Բարթողը հաղորդել էր, որ Կիպրոսի պաշտպանության նախարարության հրավերով օրերս այդ բարեկամ երկիր է այցելում ՀՀ պաշտպանության փոխնախարար գեներալ Մանվել Գրիգորյանը: Երեկ մեր պաշտպանության նախարարությունից ճշտեցին, որ ոչ թե Մանվել, այլ նույն ազգանունով մյուս փոխնախարարը՝ գեներալ-մայոր Միխայել Գրիգորյանն է այցի գնացել Կիպրոս: Թյուրիմացության համար ապաքինում ենք ընթերցողների ներողամտությանը:

ՆՅՈՒ ՅՈՐՔ

ԹՀՀՀ-ն պառակտել է Ամերիկայի հայկական համայնքը

«Պետդեպարտամենտից ուղղակիորեն պատասխանեցին. «Մենք աջակցեցինք հանձնաժողովին, քանի որ Հայոց ցեղասպանության բանաձեւի հարցում ԱՄՆ Կոնգրեսի համար այլընտրանք էր»

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ
Նյու Յորք

«Մենք իրականում դեռեւս չգիտենք «Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի» (ԹՀՀՀ) ձեւավորման հանգամանքները, քանզի նրանք, ովքեր ներգրավված են հանձնաժողովում, իրենց մեկնաբանությունների մեջ շատ աղոտ են ու երկիմաստ: Մենք այժմ գիտենք, որ ԱՄՆ պետդեպարտամենտը՝ հակառակ բազում պնդումների, թե ուղղակիորեն ներգրավված չէ, ֆինանսական օժանդակություն է տրամադրել ԹՀՀՀ-ին: Ես կարծում եմ՝ մենք դեռեւս իմանալու շատ բան ունենք ԹՀՀՀ-ի ձեւավորմանն ԱՄՆ կառավարության ներգրավվածության մասին: Ամերիկայի հայկական ազգային հանձնաժողովին (ԱՀԱՀ) պետդեպարտամենտից ուղղակիորեն պատասխանեցին, որ իրենք աջակցել են ԹՀՀՀ-ին, քանի որ Հայոց ցեղասպանության բանաձեւի հարցում ԱՄՆ Կոնգրեսի համար այլընտրանք էր», **«Ազգին»** տված հարցազրույցում ասաց Ամերիկայի հայկական ազգային հանձնաժողովի նախագահ Քեռեթ Հաչիկյանը:

ԹՀՀՀ-ի գոյությունն առաջինը բացահայտեց՝ «Նյու Յորք թայմսը», որն իր հուլիսյան համարներից մեկում գրել էր, թե հանձնաժողովականները գաղտնի հանդիպումներ են ունենում ԱՄՆ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության բանաձեւի քննարկումների ժամանակներից: Մինչեւ հոկտեմբերի 2-ը, երբ պարզվեց, որ ԹՀՀՀ-ին ֆինանսական օժանդակություն է տրամադրում ԱՄՆ պետդեպարտամենտը՝ Վաշինգտոնի ամերիկյան համալսարանի խողովակներով, պետդեպարտամենտի պաշտոնյաները կտրականապես բացառում էին ԱՄՆ կառավարության մասնակցությունը ԹՀՀՀ-ի ստեղծմանը:

Տես էջ 5

տեղական

ԱՊԱՏՈՒՅՑՆԵՐ

Ադրբեջանցիները աֆղան վարձկաններին ...

Սկիզբը էջ 1

Հետաքրքրական է, որ վարձկաններն իրենք էլ, ինչպես բացահայտում է զինուժերի հրամանատարության նամակագրությունը, իրենց համարում են առանձնահատուկ կարգավիճակ ունեցող զինվորներ՝ պահանջելով ոչ բանակային կենցաղային պայմաններ:

Ըստ 1993-ի օգոստոս-սեպտեմբերի զինվորական փաստաթղթերի, «առանձնահատուկ կոնտինգենտի» բողոքներով, որոնք հատուկ ուշադրություն են պահանջում ճակատում վիրավորված 41 հայրենակիցների հանդեպ, զբաղվել են անձամբ Ադրբեջանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետն ու պաշտպանության առաջին փոխնախարար զորքերի հրամանատարը: Վերջիններից խնդրելով «Նիվա» մակնիշի մեքենաներ, սնունդ եւ այլ պարագաներ՝ 160-րդ զորամասի հրամանատարը գրում է, թե իր կարծիքով, ինչպիսի պայմաններ էլ ապահովվեն, միեւնույն է, աֆղան վարձկանները դժգոհելու են, քանի որ ոչ մի լուրջ գործով զբաղված չեն: Ադրբեջանցի հրամանատարը նշում է նաեւ, թե աֆղանները իր զորամասում աղտեղություն եւ անվերահսկելի վիճակ են ստեղծել:

Այնուամենայնիվ, դատելով մեր ձեռքին եղած փաստական նյութից, աֆղան վարձկաններն այնքան էլ անգործ չեն եղել: Կան արաբատառ ֆարսի փաստաթղթեր, որոնցում աֆղանները հրետանային մարտերի մարտավարական հաշվարկներ են անում՝ խորհրդային զենքերի համար:

Հատկապես ի՞նչ հիմունքներով են աֆղան զինվորները համալրել ադրբեջանական բանակի շարքերը դարաբաղյան պատերազմում, ադրբեջանական զինված ուժերի՝ մեր տրամադրության տակ եղած նյութերը վեր չեն հանում, բայց արաբերենով փաստաթղթերում կան ջիհադի՝ իսլամական սրբազործման վերաբերյալ գրառումներ, որոնք հիմք են տալիս եզրակացնելու, որ նրանց մուտքը Ադրբեջան եղել է հիմնավորվելու նպատակով:

Սկիզբը էջ 1

Թուրքմենիայից գնված եւ հանրապետություն ներկրված 400 տոննա բամբակի հումքով սեպտեմբերի վերջին մանվածքային ֆաբրիկան վերագործարկվել է: Արդեն 140 մարդ ընդգրկված է աշխատանքի մեջ: Թողարկվել եւ առաքվել են թելի առաջին մի քանի տոննան: Ծրագրի իրականացումը հնարավոր է դարձել հայրենական ներդնող Ռ. Հայրապետյանի հատկացրած 3 մլն դոլարի շնորհիվ: Գումարների զգալի մասը նպատակաուղղվել է սեփական հումքային բազայի վերաստեղծմանը, եւ 2001 թ. Արարատի մարզում ցանվել է 230 հա բամբակ:

Աղետի գոտու բնակարանաշինության ծրագրի շրջանակներում Լինսի հիմնադրամի տրամադրած 21,6 մլն եւ USAID-ի 30 մլն դոլարով աղետի գոտում կառուցվում եւ վերականգնվում են 1950 բնակարան: Նախագահ Քոչարյանն այցելեց շինհրապարակ, ականատես եղավ շենքերի ամրացման աշխատանքներին: Ռոբերտ Քոչարյանի այցելության օրը տեղի ունեցան նաեւ Գյումրու երկու դպրոցների՝ Թումանյանի անվան թիվ 13 եւ Պուշկինի անվան թիվ 6 դպրոցների բացման արարողությունները: Երկու դպրոցների աշակերտներն էլ 13 տարի տնակային դասարաններում են սովորել: Թումանյանի անունը կրող դպրոցի վթարային շենքի վերականգնումը հնարավոր է դարձել պետբյուջեից տրամադրած գումարների շնորհիվ: Դպրոցի 400 աշակերտներն այսուհետ կհաճախեն վերանորոգված դպրոց, որի վերականգնման համար անհրաժեշտ է եղել 292 մլն դրամ: Իսկ ՀՀ սոցներդրումների հիմնադրամը դպրոցին հատկացրել է 60 աշակերտական սեղան եւ 120 աթոռ: Պուշկինի անվան դպրոցի վերաբացմանը ներկա էր նաեւ ՀՀ-ում Ռուսաստանի դեսպան Անատոլի Դրյուկովը: Ըստ նրա, դեռեւս անցած դարի սկզբին հիմնադրված այս դպրոցը խորհրդանշում է երկու պետությունների, հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամությունը: Դպրոցի վերանորոգման պայմանավորվածությունը ձեռք էր բերվել նախագահ Քոչարյանի Ռուսաստան կատարած այցի ժամանակ: Այն վերանորոգվել է երկու երկրների կառավարությունների ֆինանսավորմամբ եւ նախատեսված է 600 աշակերտի համար:

Մարզպետարանում տեղի ունեցած հանդիպումից հետո նախագահը զրուցեց լրագրողների հետ: Ըստ Ռոբերտ Քոչարյանի, Գյումրիի 26 դպրոցների շինարարական ծրագրերի ֆինանսավորումն արդեն ապահովված է: Մինչ այս տարեվերջ կավարտվեն 10-12, իսկ մինչեւ 2002-ի գարնան վերջ մնացած դպրոցների շինարարական աշխատանքները: Նախագահի խոսքերով՝ մյուս ուսումնական տարում աղետի գոտում ոչ մի տնակային դպրոց չի մնա: Հանրապետության նախագահը նշեց, որ Գյումրիում շինարարական աշխատանքները վերջացնելու համար արդեն կա անհրաժեշտ գումարը:

– Աղետի գոտում արդեն հնարավոր է խոսել ոչ միայն շինարարական ծրագրերի, այլեւ ձեռնարկությունների վերականգնման մասին: Եթե 3-4 տարի առաջ Գյումրին ներդնողի համար հետաքրքրություն չէր ներկայացնում, այսօր իրավիճակը փոխվել է:

Նախագահը նշեց նաեւ, որ կան ծրագրեր քաղաքի մշակութային հաստատությունների վերականգնման վերաբերյալ:

Բնականաբար, լրագրողներն առիթը օգտագործելով, նախագահին ուղղեցին նաեւ ներքին քաղաքականությանը վերաբերող հարցեր: Մասնավորապես ինչպե՞ս եք վերաբերվում ներկայիս ընդդիմության հնարավոր հանդիպումներին: Հետաքրքրվեցին՝ արդյոք Հանրապետական կուսակցության նախագահ Վազգեն Մանուկյանի հետ հանդիպելու դեպքում Դուք նրանց հետ կքննարկեք նաեւ ներքաղաքական հարցերը: Նախագահը նշեց, որ ինքը դեռ չի մտածել դրանց մասին:

ՍՏՈՒԳԱՅՑ

Տնտեսության զարգացման միտումներ Շիրակի մարզում

Մարզի գյուղատնտեսությունը զարգացման հեռանկարներ ունի: Դրանք պայմանավորված են մի շարք գործոնների ազդեցությամբ: Դրանցից գլխավորներն են հողերի բարեբեր լինելը, ոռոգման ջրի առատությունը, գյուղատնտեսական մեքենաների, տեխնիկայի, սերմերի, պարարտանյութերի, գյուղատնտեսական կենդանիների, թռչունների, մեղուների, ինչպես նաեւ գյուղատնտեսական հումքի վերամշակման ձեռնարկությունների ներդրումները: Դրանք հնարավորություն են տալիս ապագայում զգալիորեն բարձրացնել գյուղատնտեսական արտադրանքի ծավալները, ինչպես նաեւ ապահովել դրանց մրցունակությունը:

Ներդրումներ կատարելու գործում մեծ դերակատարություն ունի պետությունը: Ներդրումներ կատարելու գործում մեծ դերակատարություն ունի նաեւ գյուղատնտեսական ապրանքներ արտադրող ֆերմերային տնտես

ԱԶԳ

ՕՐԱԹԱԳԻՐ

«Արմենտելն» ու «Արմինկոն» ստեղծեցին նոր ընկերություն

Երեկ «Արմենիա» հյուրանոցում համատեղ մամուլի ասուլիս էին հրավիրել «Արմենտելի» գործադիր տնօրեն Նիկոլաս Յորդուլասը եւ «Արմինկոյի» տնօրեն Անդրանիկ Ալեքսանյանը, որտեղ նրանք ազդարարեցին նոր, համատեղ ընկերության ստեղծման մասին: «Ինֆոկոմ» կոչվող ընկերության բաժնետոմսերի 51 տոկոսը կպատկանի «Արմենտելին», 49 տոկոսը՝ «Արմինկոյին», գործադիր տնօրենը պետք է լինի «Արմինկոյի» ներկայացուցիչը, այսինքն՝ «Արմինկոն» կիրակնացնի նոր ընկերության մենեջմենթը:

Խոսելով երկու ընկերությունների համագործակցության մասին, Նիկոլաս Յորդուլասը նշեց, որ ընդարկումները Հայաստանում ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտի զարգացման վերաբերյալ սկսվել էին ավելի վաղ: Նա համոզմունք հայտնեց, որ «Արմինկոն» այս ոլորտի առաջավոր ընկերություններից է, ինչն էլ դրդել է «Արմենտելին» նրա հետ համագործակցության ճանապարհը ընտրել:

«Արմինկոյի» տնօրենը եւս զերծ չմնաց իր գործընկերոջը հաճոյախոսություններ ուղղելուց եւ ասաց, որ «Արմենտելը» ձեռք է մեկնել «այս բիզնեսի զարգացմանը, ինչը կարող էր եւ չանել»: Ինչ վերաբերում է նորաստեղծ ընկերության նպատակներին, ապա Անդրանիկ Ալեքսանյանը դրանցից գլխավորը համարեց այն, որ ինտերնետ ծառայություններից օգտվողները ստանան հնարավորինս որակյալ ծառայություններ, իսկ «սակագները ժամանակի ընթացքում կփոխվեն»: Նա համոզմունք հայտնեց, որ այս կազմակերպության անունը 1 տարի հետո ավելի բարձր կհնչի:

«Ազգի» հարցին, թե ի՞նչ կապուղիներով է ծառայություններ մատուցելու «Ինֆոկոմը», երբ միջազգային ելքի արբանյակային սեգմենտի եւ մանրաթելի սակագները հաստատված չեն, Անդրանիկ Ալեքսանյանը պատասխանեց, որ սակագների հարցը ժամանակի ընթացքում կկարգավորվի, իսկ ծառայությունները կմատուցվեն այն հնարավորություններով, որոնք առկա են: Չստանալով սպառիչ պատասխան, ասուլիսից հետո որն Ալեքսանյանին դիմեցինք մեկ այլ հարցով, թե արդյոք մյուս պրովայդերները չե՞ն հայտնվի անհավասար վիճակում, քանի որ «Արմենտելի» մենաշնորհ հանդիսացող հնարավորություններից կարող է օգտվել միայն «Ինֆոկոմը»: Դրան «Արմինկոյի» տնօրենը բացասական պատասխանեց, ասելով, որ ներկայումս ճիշտ ձեւով կապուղի ստանալու համար դիմող չկա, եւ ոչ թե «Արմենտելն» այն չի տրամադրում: Մինչդեռ իրականությունն այլ է՝ հենց «Արմենտելը» չի տրամադրում այդ կապուղիները, ինչին **«Ազգը»** բազմիցս անդրադարձել է ի թիվս այլոց՝ հրապարակելով նաեւ ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության պաշտոնական տեսակետը («Ազգ», 2 հոկտեմբերի «Արմենտելը» հիմնավորված հաշվարկներ չի ներկայացրել»):

Նորաստեղծ ընկերության մենաշնորհ ստանալու կապակցությամբ հարցին «Արմենտելի» տնօրենն իր հերթին բացառեց դա, ասելով, որ յուրաքանչյուր պաշտաճ գործունեություն չի խանգարում բիզնեսին: Ինչեւէ: Մեզ մնում է հուսալ, որ նորաստեղծ ընկերությունն, իրոք, կմատուցի որակյալ ծառայություններ եւ խոչընդոտ չի դառնա նաեւ ոլորտի մյուս ընկերությունների կողմից նմանատիպ ծառայությունների մատուցման համար:

ԱԲԱ ՄԱԲՏԻԲՈՍՅԱՆ

Մեկ եկ ու Ավստրիան

Հայաստանի Հանրապետությունն այս տարվա ընթացքում ներդրումների փոխադարձ խրախուսման եւ պաշտպանության երրորդ համաձայնագիրը կնքեց: Առաջին երկուսը ստորագրվել են Բելառուսի (այդ երկրի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի այցի ժամանակ) եւ Ղազախստանի Դաշնության (նախագահ Վլադիմիր Պուտինի այցելության ժամանակ) հետ: Երեկ արդյունաբերության եւ առեւտրի փոխնախարար Տիգրան Դավթյանը եւ Հայաստանում Ավստրիայի դեսպան Հայդե Մարիա Գյուրերը ստորագրեցին վերոնշյալ համաձայնագիրը:

Ընդհանուր առմամբ Հայաստանն այդպիսի միջկառավարական պայմանագիր է ստորագրել 25 երկրների հետ, եւ եւս այդքան երկրների հետ էլ համաձայնագրերը պատրաստ են ստորագրման: Ընդգծենք, որ որոշ դեպքերում նման համաձայնագրերի ստորագրումից հետո Հայաստանում ներդրումների կտրուկ աճի դեպքեր են եղել: Այսպես՝ Իտալիայի հետ ներդրումների խրախուսման եւ պաշտպանության համաձայնագրի ստորագրումից հետո՝ 1998 թ.-ից մինչեւ 2000 թ., այդ երկրից Հայաստան կատարված ներդրումներն ավելացել են 14 անգամ, իսկ ֆրանսիական ներդրումները 1995 թ. նման պայմանագրի ստորագրումից հետո աճել են ավելի քան 7 անգամ: Արդյոք նման արդյունավետություն կունենա՞նք այս համաձայնագրից հետո, ժամանակը ցույց կտա: Իսկ ներկայումս Հայաստանի եւ Ավստրիայի առեւտրաշրջանառությունը չնչին ծավալներ ունի, իսկ մեզ մոտ գործում են ընդամենը 6 հանրապետ ձեռնարկություններ:

Ա. Մ.

Նախարարությունը պահանջում է հետ վերցնել ռոդեավճարի հաշիվները

Իսկ «Արմենտելը»՝ հրաժարվում մեկնաբանել

Երեկ ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության լրատվական ծառայությունից տեղեկացանք, որ նախարար Անդրանիկ Մանուկյանը հանձնարարական է ստորագրել, որում «Արմենտելի» գործադիր տնօրեն Նիկոլաս Յորդուլասից պահանջվել է միջոցներ ձեռնարկել ռոդեավճար չկիրառելու նախարարի օգոստոսի 31-ի հանձնարարականի խախտման վերացման համար: Այսինքն՝ «Արմենտելի» ղեկավարությունից պահանջվել է փոստային ծառայություններից հետ վերցնել բաժանորդներին ուղարկված սեպտեմբերի հաշիվները: Խախտումը չվերացնելու դեպքում «Արմենտելի» գործելակերպը «Լիցենզավորման մասին» օրենքի 3-րդ հոդվածի հիմունքներով կարող է որակվել չարամիտ խախտում՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով»:

Տրանսպորտի եւ կապի նախարարության այս հաղորդագրության կապակցությամբ «Արմենտելի» տեսակետին ծանոթանալու նպատակով դիմեցինք ընկերության լրատվական ծառայությանը, որտեղից մեզ պատասխանեցին, որ ընկերությունը չի ցանկանում մեկնաբանություն տալ:

Ա. Մ.

Դադարեցվել են «Swissair»-ի թռիչքները Երեւան

Հոկտեմբերի 9-ից դադարեցվել են շվեյցարական «Swissair» ավիաընկերության թռիչքները Երեւան: Ինչպես հայտնեցին ավիաընկերության երեւանյան գրասենյակից՝ մինչեւ հոկտեմբերի վերջ թերեւս կվերականգնվեն Ցյուրիխ-Երեւան-Ցյուրիխ չվերթները, երբ կհստակեցվի ընկերության ֆինանսական վիճակը: Հիշեցնենք, որ «Swissair»-ի ֆինանսական ճգնաժամը, որը խորացավ սեպտեմբերյան ահաբեկչություններից հետո, սկսվել էր դեռեւս այն ժամանակ, երբ ամերիկյան «Delta Airlines»-ը հրաժարվեց նրա հետ գործընկերությունից:

Գ. Մ.

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ

Իշխանությունները բռնե՞լ են արմատականների քիթը

Քաղհալածյալի կերպարը մարմնավորելիս

Արմատական ընդդիմության որդեգրած քաղաքական կուրսն այնպիսին է, որ երկրում կատարվող յուրաքանչյուր պրոցես քաղաքականացնելու միջոցով փորձ է արվում ամեն կերպ խաթարել ներքաղաքական քիչ թե շատ կայուն իրավիճակը: Եթե հետեւելու լինենք արմատականների տրամաբանությանը, միանշանակ կարելի է կարծել, թե այս երկրում յուրաքանչյուր մանր ու մեծ հանցագործ կամ կասկածվող ծերբակալվում է միայն քաղաքական շարժառիթներով: Արմատականների նման գործելակերպը միտված է նրան, որպեսզի շատ արագ կյանքի կոչվի իրենց իսկ մշակած ու ապարեզ հանած երկրում «վախի ու սարսափի մթնոլորտի» գաղափարը:

Հիշենք Ազատ Արշակյանին, որին ծերբակալեցին իր կուսակցության վարչական շենքում զենք-զինամթերք հայտնաբերելու հիման վրա: Դեռ չէր էլ ծշտվել Արշակյանի մեղավորության չափը, անմիջապես շահարկվեց նրա ծերբակալության քաղաքական շարժառիթների հարցը: Եվ պատկերացնո՞ւմ եք՝ ինչ հիմնավորում բերվեց. իբր վերջին շրջանում ակտիվություն էր սկսել ցուցաբերել Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցությունը, եւ իշխանություններին պետք էր կտրել այդ լեզուն: Խեղճ «Օրինաց երկիր» կամ Ազգային միաբանություն. եթե այս տրամաբանությամբ շարժվենք, ապա այս երկու կուսակցություններում մարդ չպիտի մնար, ու բոլորն էլ քաղբանտարկյալի որակմամբ բանտերը պիտի լցնեին: Ասենք այնպես, ինչպես ոչ վաղ անցյալում Լեւոն Տեր-Պետրոսյանի անմիջական ջանքերով դաշնակցականներով էին լցվել բանտերը, եւ, չնայած դրան, հենց Լ. Տեր-Պետրոսյանի հետ արմատականների վառ անհատականությունները նշեցին անկախության հանրաքվեի 10-ամյակը: Եվ եթե առանց որեւէ հիմքի էին դաշնակցականների վրա գործեր թխվում, Արշակյանի դեպքում առգրավված զենքի առկայությունն այնքան ակնհայտ էր, որ անգամ «Անկախության բանակ» հասարակական կազմակերպության ղեկավարն ինքը նշեց, որ այդ զինամթերքը իսկապես պատկանել էր իրենց «տղերքին»: Ուրեմն ի՞նչ կարիք կար ամեն ինչ այնպես ներկայացնել, թե այս երկրում մարդկանց քաղաքական հետաքրքրումների են ենթարկում՝ ասիճանաբար կերպավորելով քաղհալածյալի գաղափարը:

Խնդիրն այսքան չէր սրվի, եթե առաջ չքաշվեր մի նոր հետաքրքրվող, «առաքինի, անբասիր» նախկին բանտարկյալ՝ Մուշեղ Սաղաթելյանի պարագան: Մարդն ինչ է ասում որ՝ ընդամենը երկրի նախագահին եւ Սերժ Սարգսյանին մեղադրում է... հոկտեմբերի 27-ի կազմակերպման մեջ: Ու պատկերացնո՞ւմ եք ինչ մեղադրանքով. «Գագիկ Ջհանգիրյանն ասում է՝ երեխաներիս բաղեմ, թե Սերժն ու Ռոբերտը չեն: Ես բարոյական իրավունք չունեմ չհավատալու, որ Սերժն ու Ռոբերտը չեն»: Մի կողմ թողնենք հանրապետության զինդատախազի այս խոսքերը, որոնք ինքը՝ Ջհանգիրյանը, հերքում է. «Ինչ վերաբերում է Սաղաթելյանի վկայակոչած խոստովանական երդմանը, ապա դրանում օգտագործված բառերն իսպառ բացակայում են իմ բառապաշարից»: Բայց որ նման խոսքերը կարող են հիմք տալ նման դարակազմիկ ենթադրությունների, կարելի էր սպասել միայն կեղծ դիպլոմով մինչեւ երեսկան պատիժների իրականացման վարչության պետի պաշտոնի հասած մարդուց: Եվ կարո՞ղ եք երեւակայել. այս մարդը նույնիսկ գիտի, որ ՆԳ համակարգում էլի կեղծ դիպլոմներով աշխատողներ կան, բայց դե մարդկանց հո վատություն չի անելու՝ անուններ տա: Ավելի հետաքրքիր գիտի. հայտարարել, թե Սերժ Սարգսյանն ու Հայկ Հարությունյանն էլ գիտեն այդ մասին:

Վերադառնանք Սաղաթելյանի մեղադրանքներին: Ջհանգիրյանի «անկեղծ խոստովանություններին» հավատացած նախկին բանտարկյալը, սակայն, մի դեպքում էլ... չի հավատում զինդատախազին եւ պնդում է, թե նա նախաքննության ուղղությունը փոխել է 99-ի հոկտեմբերի 27-ից մինչեւ 2000-ի մարտ ամիսը: Հիմա հարց է ծագում՝ Սաղաթելյա՞նն է երկակի խաղ խաղում, թե՞ Ջհանգիրյանը, որոնք երկուսն էլ անմիջականորեն առնչվել են ՆԳ գործակալների ներկայացրած տեղեկություններին՝ թե ինչ են խոսել «27»-ի գործով մեղադրյալները մեկուսարաններում: Եվ մի դեպքում Սաղաթելյանը հավատացել է այդ գործակալներից մեկի՝ Հարություն Գրիգորյանի զեկուցագրին, որտեղ վերջինս վստահություն է հայտնում, թե «Ռոբերտն ու Սերժն են կազմակերպել ոճրագործությունը, մյուս դեպքում՝ համոզված է, որ այդ նույն մեղադրանքները հաստատող իրեղեն ապացույցներ ներկայացնող գործակալը... իր գլխին «գործ է սարքում»: Ինչո՞ւ պիտի, ասենք, գործակալին չհավատար Սաղաթելյանը, եթե ինքը, իր ասելով, 2000-ի գարնանը 17 նախկին ու ներկա իշխանավորների մոտ բացահայտ Քոչարյանի ծակատին ասել էր, թե նրան է կասկածում «27»-ի կազմակերպման մեջ: Կամ, ասենք, եթե ինքը ծանոթ էր գործակալի ներկայացրած ծայներիզին, այն մասին, թե ինչպես են ահաբեկիչներն Աժ մտնելու ծրագիրը կազմում, ինչո՞ւ այդ մասին չէր հայտնում իրավապահներին, կամ եթե նրանց չի վստահում՝ լրատվամիջոցներին՝ ապացուցելու իր «ճշմարտախոսությունը»:

Մյուս կողմից՝ գրեթե հիմնավորված չեն Սաղաթելյանի վկայակոչած փաստարկները, թե գործակալների եզրակացությունների կարեւոր հատվածները դուրս են մնացել «27»-ի գործից կամ տարբեր բովանդակության են: Եթե դա իրոք այդպես է, ապա իր մեղքի մեծ բաժինն ունի նաեւ Սաղաթելյանը, քանի որ հենց նա եւ նրա ղեկավարած քննչական մեկուսարանի պատասխանատուներն են անմիջապես պատասխանատու ստացվող օպերատիվ տեղեկությունների եւ փաստաթղթերի կազմման համար:

Սակայն Սաղաթելյանի հակասական բացահայտումներն այդքանով չե՞ն սահմանափակվում: Մի կողմից՝ նա կասկած է հայտնում, թե ինչու հոկտեմբերի 27-ից անմիջապես հետո կազմված քննչական խումբը, որը կազմված էր փորձառու քննիչներից ու դատախազներից, նոյեմբերի սկզբներին փոխարինեց նոր, «անփորձ» խմբով, մյուս կողմից՝ հայտարարում է, թե իր գոյության 7–8 օրվա ընթացքում նախկին քննչական խումբը ոչինչ չի արել. ինչո՞ւ:

Այս հակասություններից, որոնք դեռ կարելի է շարունակել, միայն մեկ բան կարելի է հստակ ասել. բանտարկյալն ամեն ինչ անում է թյուրիմացությունների մեջ գցելու հասարակությանը եւ իր հարցն ամեն կերպ քաղաքականացնելու: Դա նրան իսկապես հաջողվեց եւ արդյունքում ունեցավ այնպիսի պատվար, ինչպիսին «Հանրապետություն» կուսակցությունն էր, որը շտապեց հայտարարել, թե «Մ. Սաղաթելյանն ըստ էության այսօր պահվում է պատանդի կարգավիճակով՝ ընդդիմության գործունեությունը սահմանափակելու եւ վերահսկելի դարձնելու նպատակով...»: Առավել ուշագրավ է վերջին արտահայտությունը, որից կարելի է ենթադրել, թե Սաղաթելյանը կուսակցության քիթն է, որն ուզում է բռնել Ռոբերտ Քոչարյանը: Եթե «Հանրապետության» ողջ պոտենցիալն ընդամենը «27»-ի գործը քաղաքականացնելու եւ նախագահի «վրա» դուրս գալը չէ, ինչո՞ւ պիտի Սաղաթելյանի ծերբակալմամբ իրենք վերահսկելի դառնան:

Ինչեւէ, Սաղաթելյանը հայտնում էր, թե ինքն ընդամենը իր իմացածի 20 տոկոսն է հայտնել: Այժմ նա ծերբակալված է եւ կարելի է իրականացած համարել նրա երազանքներից մեկը, իրեն անպայման կհարցաքննեն սենսացիոն հայտարարությունների իսկությունը բացահայտելու համար: Միայն հուսանք, որ դրանք այնքան «հիմնավորված» ու ուշացած չեն լինի, որքան իմացած ու հայտնած 20 տոկոսի դեպքում էր:

ԳՈՌ ԱԲԲԱՍՅԱՆ

ցեղասպանություն

Ցեղասպանության վերաբերյալ փաստաթղթերի զանազան կեղծումներ Գերմանիայի արտգործնախարարության կողմից

2001 թ. սեպտեմբերի 9-ին գերմանացի անվանի հրապարակախոս եւ գերմանական «Դեր Շպիգել» ճանաչված հանդեսի նախկին խմբագիր պարոն Վոլֆգանգ Գուսթը Բեռլինում զեկուցում ունեցավ գերմանացի ասվածաբան Յոհաննես Լեփսիուսի «Գերմանիան եւ Հայաստանը 1914-1918 թթ.» աշխատության մեջ հրապարակված դիվանագիտական փաստաթղթերի հետ կապված կեղծիքների վերաբերյալ: Այդ աշխատությունը պետք է հերթեր անգլոսաքսոնական եւ ֆրանսիական մամուլի մեղադրանքները, թե Գերմանիան նույնպես պատասխանատու է հայերի ցեղասպանության համար, եթե նրա նախաձեռնողը չէ: Լեփսիուսի փաստաթղթերը Փարիզում ընթացող խաղաղության հաստատման բանակցությունների վրա, որոնք ի վերջո հանգեցրին Վերսալի պայմանագրերին, պետք է ունենային Գերմանիայի համար նպաստավոր ազդեցություն:

Թեեւ Լեփսիուսի աշխատությունը թուրքերի կատարած հայերի ցեղասպանությունն այնպես է վավերագրում, որ ցեղասպանության փաստի վերաբերյալ ոչ մի կասկած չի հարուցում, միաժամանակ նա բազմաթիվ փաստաթղթերի կեղծման միջոցով փաստորեն ջնջում է Գերմանիայի պատասխանատվության բոլոր հետքերը: Սակայն այդ մեթենայությունների մեծ մասի հեղինակն ակնհայտորեն ոչ թե Լեփսիուսն է, ինչպես նշում է Գուսթը, այլ Գերմանիայի արտաքին գործերի նախարարությունն ինքը, քանի որ Լեփսիուսն իր փաստաթղթերը ստեղծել է բացառապես հիմնվելով այն պատճենների վրա, որոնք նրան տրամադրել է արտգործնախարարությունը՝ նախօրոք փոփոխելով դրանք վճռորոշ հատվածներով: Նրանք տպավորություն են ստեղծել, թե իբր գերմանական ռայխը հանձն է առել հայերի խնամքը եւ փորձել է պաշտպանության տակ առնել նրանց, ինչքան որ կարողացել է:

Մինչդեռ ինտերնետում (www.armenocide.de, ինչպես նաեւ www.armenocide.net) մինչ այժմ հրապարակված փաստաթղթերի բնօրինակները (բոլոր կարեւոր փաստաթղթերը թարգմանված են անգլերեն) գրեթե հակառակն են ապացուցում: Դրանք, օրինակ, պարունակում են Գերմանիայի այն ժամանակվա ռայխսկանցլեր Բեթման-Հոլվեգի պարզ հրահանգը, որ պետք չէ հայերին որեւէ ուշադրություն դարձնել: Բեթման-Հոլվեգը, շատ պարզ մերժելով դեսպան Վոլֆ Մետերնիխի պահանջը՝ բացեիբաց խարազանել ցեղասպանությունը, նշել է. «Մեր միակ նպատակն է՝ Թուրքիային մինչեւ պատերազմի ավարտը պահել մեր կողմը, անկախ նրանից, հայերը դրանից կկործանվեն, թե ոչ»:

Բնօրինակներն ապացուցում են նաեւ, որ գերմանացի սպաները ռազմական հարձակումներ են գործել հայ խաղաղ բնակչության վրա: Նրանցից մեկը՝ Շոյբներ-Ռիխտերը, մերժել է գրոհել այսպես կոչված խռովարար հայկական գյուղը՝ թուրքական իր զորքերի միջոցով (թուրք սպաները սանձնեցին նրա առաջադրանքը): Մեկ ուրիշը՝ պրուսական հրետանու սպա Վոլֆսիլ ֆոն Ռայխենբերգը, օսմանցի գեներալ Ֆահրի հետ գնդակոծել է Ուրֆայի հայկական թաղամասը եւ իր թուրք գործընկերոջ հետ հայերի դեմ կռվել նաեւ Զեյթունում եւ Մուսալեռում:

Բնօրինակ փաստաթղթերը նկարագրում են ոչ միայն գերմանացիների՝ հայերի դեմ կատարած գործողությունները, այլեւ ցույց են տալիս գերմանացի դիվանագետների կամ պաշտոնական ներկայացուցիչների քաղաքական սուր հայացքները, որոնք ինչպես ռասիսական բնույթի են, այնպես էլ ապացուցում են գերմանացիների համաշխարհային տիրապետության հասնելու ձգտումները: Դա վերաբերում էր ինչպես Օսմանյան կայսրության, այնպես էլ Կովկասի հայերին, որտեղ հայերի բարեկեցությունը գերմանացիներին ավելի քիչ էր հետաքրքրում (ինչպես Լեփսիուսի աշխատությունն է հավաստիացնում), քան Բաքվի (որտեղ հայերը ներքին ուժեղ դիրքեր ունեին) նավթը, քան դեպի Պարսկաստան եւ Հնդկաստան տանող ռազմական ճանապարհը: Գերմանիայի ներկայացուցիչների մեծամտության օրինակ է Երեւանում ներկայացուցիչ, օդային ուժերի լեյտենանտ Այզենմանը: Նա այն կարծիքն է հայտնում, որ հայ ժողովուրդը «ճիշտ այնպես անկիրթ, անտաշ եւ բռի է, ինչպես հայերի կողմից մշտապես ստորացվող թաթարները»: Մի այլ տեղ նա հայերին պատկերում է որպես «անհուսալի եւ անբան», բացի այդ նրանց մեջ չեն եղել «մեր ընկալմամբ իսկական եւ բազմակողմանի կրթված ու զարգացած անձինք»: «Բնածին ծուլության պատճառով» նրանց «մաչելի չէ մշակութային առաջադիմությունը»:

Ակնհայտորեն Լեփսիուսը կեղծիքների մեծ մասին տեղյակ չէր, ինչպես նշեց Գուսթը, եւ նա իր ուժերն ամբողջովին կենտրոնացրել էր վավերացնելու ցեղասպանությունը գերմանական փաստաթղթերով, որի վերաբերյալ Գերմանիայի արտգործնախարարությունը դարձյալ բարյացակամություն չցուցաբերեց: Պայքարն այդ ուղղությամբ ակնհայտորեն կլանել էր նրա ուժերը, քանզի վերստուգման համար վստահ նրա ոչ միայն ուժերն են անբավարար, այլեւ ժամանակն է սուղ եղել, քանի որ ամբողջ աշխատանքը պատրաստվել էր ընդամենը մի քանի ամսվա ընթացքում:

ՍՏԵՓԱՆ ԹԱՔՃՅԱՆ
Փաստաբան
Բեռլին

Մեծ եղեռնի նահատակ Իգնատիոս արք. Մալոյան

Վերջերս մամուլը հրատարակեց հաղորդագրություն, որ ս. թ. հոկտեմբերի 8-ին Վատիկանի Սուրբ Պետրոս հրապարակում Հռոմի պապ Հովհաննես Պողոս 2-րդը հանդիսավոր արարողությամբ Երանելիների շարքն է դասել Մարտինի հայոց կաթոլիկ առաջնորդ, 1915 թ. ցեղասպանության զոհ դարձած Իգնատիոս արքեպիսկոպոս Մալոյանին: Կարծում ենք՝ ընթերցողներին կհետաքրքրի, թե ով էր Իգնատիոս Մալոյանը:

Հայ եկեղեցին դարեր շարունակ եղել է ազգապահպանման կարեւոր գործոններից մեկը: Հայ հոգեւորականությունը մեր ժողովրդի համար օրհասական պահերին միշտ նեցուկ է եղել նրան եւ կրել առաջին հարվածը: Բացառություն չէին նաեւ 1915-23 թթ. Հայոց մեծ եղեռնի տարիները, երբ ամենադաժան եւ սարսափելի տանջանքներով սպանում էին հատկապես հայ հոգեւորականներին, որոնք, հավատարիմ մնալով իրենց երդմանը, տաժանակիր մահը գերադասում էին հավատուրացությունից: Կարելի է նման բազում օրինակներ բերել, սակայն մենք կխոսենք Մարտինի արք. Իգնատիոս Մալոյանի մասին:

Մարտինը, Դիարբեքիրի (Տիգրանակերտ) նահանգում, Հայ կաթոլիկ նվիրապետության թեմերից ամենահինն էր, որի գրեթե ողջ հայ բնակչությունը (շուրջ 22000 հոգի) կաթոլիկ էր: 1915 թ. Մարտինի կաթոլիկ հայերի առաջնորդն էր Իգնատիոս արք. Մալոյանը: Նա ծնվել է 1869 թ. ապրիլի 8-ին, Մարտին քաղաքում: Նախնական կրթությունը ծննդավայրում ստանալուց հետո՝ 1883 թ. մեկնել է Զմմառի պատրիարքական կղերանոցը, որտեղ 1896 թ. քահանա է ձեռնադրվել, ապա վերադարձել ծննդավայր: Որոշ ժամանակ այնտեղ պաշտոնավարելուց հետո անցել է Կ. Պոլիս եւ կարգվել կաթոլիկ պատրիարքարանի քարտուղար, ապա մեկնել Եգիպտոս՝ որպես Ալեքսանդրիայի փոխանորդ: Տարիներ հետո Կ. Պոլիս կանչվելով՝ 1911 թ. հոկտեմբերի 22-ին ընտրվել է Մարտինի արքեպիսկոպոս՝ լիովին նվիրվելով իր թեմի մշակութային եւ կրոնական առաջադիմության գործին:

1915 թ. թուրք ոճրագործները սկսեցին իրականացնել հայերի բնաջնջման իրենց եղերական ծրագիրը. անմասն չմնաց եւ Մարտինի շրջանը: 1915 թ. մայիսի 1-ին Իգնատիոս արք. Մալոյանը՝ այդ տարաբախտ գերապայծառը, կանխատեսելով իր եւ իր հոտի գլխին գալիքը, Մարտինի ասորի կաթոլիկների առաջնորդարանում հավաքում է թեմի տասնհինգ հոգեւորականներին, հորդորում նրանց վերակենդանացնել հավատքը, պատրաստ լինել վաստակաբերին: Իսկ հունիսի 2-ին շրջաբերականով դիմում է Մարտինի ասորի կաթոլիկների՝ եպիսկոպոս Գաբրիել Թափունիին՝ հանձնելով նրան իր հոտի խնամքը: Նա գրում էր. «Ես, որչափ որ տկարությունս ներեց, ջանացի խոնարհաբար եւ կատարելապես հնազանդել Աստուծոյ Եկեղեցւոյն Գլխուն, Հռոմայ Սուրբ Քահանայապետին, եւ իմ փափաքս է տեսնել, որ եկեղեցականներս եւ ցանկալի հոսս ալ ինձ հետեւին միեւնոյն կատարեալ հպատակութեամբ Առաքելական Սուրբ Աթոռին...»:[1]

Հունիսի 3-ին քաղաքում սկսվեցին ծերբակալությունները: Գերապայծառը իր տասներկու քահանաների հետ ձերբակալվեց կեսօրից հետո: Երբ նրան շղթայակապ բերում են ոստիկանատուն, Մարտինի դահիճը՝ ոստիկանապետ Մեմտուհ բեյը սկսում է հարցաքննել նրան, ապա, չգոհանալով նրա պատասխաններից, ուժգին ապտակով գետին է գլորում գերապայծառին, իսկ մի այլ գազան էլ սկսում է անխնա գանակոծել: Ապա առաջարկում են հանուն փրկության իսլամանալ: Սրբազանը բարձրաձայն պատասխանում է. «Ո՛չ, ո՛չ, ես երբեք չեմ ուրանար իմ փրկիչս Յիսուս-Քրիստոսը, եւ պատրաստ եմ արիւնս թափել հաւատիս համար...



Հարուածեցէք, կտրէ՛ք, ես չեմ ուրանար իմ քրիստոնեայ հաւատս»:[2]

Սրբազանին առաջնորդում են բանտ, որտեղ նա ենթարկվում է խստագույն անարգանքների, ամեն տեսակի տանջանքների. գազանաբար գանակոծելուց հետո աքցանով նրա եղունգները են քաշում... Այդ ամենը գերապայծառը անմռունչ տանում է: Հունիսի 9-ին նրա մորն արտոնվում է տեսակցել զավակին, սրբազանն իր հարազատին չտխրեցնելու համար մի ակնարկ անգամ չի անում իրեն բաժին հասած տանջանքների մասին:

Հունիսի 10-ին, հինգշաբթի օրը, առավոտյան 417 հոգուց եւ 12 վարդապետներից բաղկացած շղթայակապ քարավանը լուռ եւ դանդաղ առաջ էր ընթանում Մարտին քաղաքի մեծ պողոտայով: Քարավանը շրջապատված էր հարյուր քաղաքապահ զինվորներով՝ ոստիկանապետ Մեմտուհ բեյի գլխավորությամբ: Գերապայծառ Մալոյանը, գլխաբաց ու բոկոտն, շղթայակապ, երկաթյա օղակները պարանոցին, կաղնիկապ, շրջապատված երկու ոստիկաններով, քայլում էր քարավանի հետեւից: Չնայած իր ծերունի կապերին նա կարողացավ իր վերջին օրհնությունը հղել իրենց հովվին ի մահ ճանապարհող հավատացյալ ժողովրդին, իր եպիսկոպոսական քաղաքին:

Մահվան քարավանը, դուրս գալով քաղաքից, ասպիճանաբար հալվելով, շարժվում էր դեպի Տիգրանակերտ: Մեմտուհ բեյի իսլամանալու առաջարկը 400-ի կողմից միաբերան մերժվեց. «Պիտի մեռնինք, բայց պիտի մեռնինք Յիսուս Քրիստոսի համար»:[3]

Երբ եղերաշունչ թափորը մոտեցավ Զարգավան բերդին, Այն-Ամարտ կոչվող աղբյուրի մոտ Մալոյան սրբազանը, վերջին խոսքի թույլտվություն ստանալով, իր քահանաների հետ շրջեց քարավանի շարքերով, վերջին արձակումը տվեց, գերագույն մխիթարանքներով խրախուսեց մահապարտներին: Հետո արքեպիսկոպոսը մի հաց սրբագործեց, եւ քահանաները սուրբ մասունքը բաժանեցին հավատացյալներին՝ հաղորդելով նրանց: Պատմում են,[4] որ սուրբ խորհրդի պահին մի քանիսը ամոթ է շրջապատել հավատացյալներին՝ նրանց բոլորովին անտեսանելի դարձնելով մահմեդականների աչքին: Ասված հանկարծ հյուսել էր այդ ողջ սրբազան իրերը հեթանոսների աչքից ծածկելու համար: Հետագայում, ներկա գտնվող թուրքերը պետք է վկայեն, որ այդ պահին մի զմայլելի բուրմունք են զգացել:

Այս սուրբ արարողությունից հետո Մեմտուհ բեյը քարավանից զատեց երկու խումբ, որոնք առանձին-առանձին դեպի մահ ճանապարհվեցին: Մնացածը (204 հոգի) գերապայծառի հետ շարունակեցին իրենց ճանապարհը: Երկու ժամ քայլելուց հետո նրանք հասան Տիգրանակերտից չորս ժամ հեռու գտնվող խորահատակ մի ձոր, որտեղ Սրբազանին զատեցին, իսկ մնացած բոլորն անխտիր բնաջնջվեցին: Նրանց կրոնական հաստատակամությունը եւ մահը հիացրել էին անգամ այդ ամենին ականատես ավարառու քրդերին:

Գերապայծառին սպիտակ ձիաձի հեծնել եւ գնալ առջեւից: Երբ հասնում են Տիգրանակերտից երեք ժամվա հեռավորության Գարա-Քեուիրյու վայրը, Մեմտուհ բեյը մի անգամ եւս խոստանում է խնայել Սրբազանի կյանքը, եթե նա հավատափոխ լինի:

Ի պատասխան սառը մերժում ստանալով, այդ դահիճը հարձակվում է գերապայծառի վրա, վայրագորեն փորում նրա աչքերը, ապա մորուքից բռնելով գլխատում նրան: Եվ արքեպիսկոպոսն ընկնում է արյան լճի մեջ: Նա մահացած էր... Մարտինի սիրելի եւ քաջ առաջնորդը 46 տարեկան էր եւ 4 տարվա եպիսկոպոս... Ոճրագործները շտապում են Տիգրանակերտ՝ բժիշկներին ստորագրել տալու, թե իբր գերապայծառ Իգնատիոս Մալոյանի ծանր հիվանդության ընթացքում նրա հասած մահը սրտի կաթվածի հետեւանք էր...

Սա ընդամենը մեկ օրինակ էր. մի հայ քրիստոնյայի դաժան ճակատագիր: Իսկ Մեծ եղեռնի զոհ հայ հոգեւորականների թիվը հասնում է շուրջ երկու հազարի: Նրանք բոլորն էլ նահատակվել են հանուն հավատի, հանուն ազգի: Այս արժանավոր հայ քրիստոնյա վարդապետին Երանելիների շարքը դասելը Հռոմի պապի կողմից եւս մեկ քայլ էր Հայոց ցեղասպանության դատապարտման գործում:

---

1. Թեոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան, Նիւ Եորք, 1985, էջ 277
2. Նազլեան Հովհաննէս արք., Յուշերը Մեծաւոր Արեւելքի 1914-1928 շրջանի քաղաքական-կրօնական դէպքերուն մասին, Պէյրութ, 1960, էջ 368
3. Նազլեան Հովհաննէս արք, «Յուշերը...», էջ 371:
4. Նույն տեղում:

ԼՈՒՍԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտի գիտական աշխատող

ՆՅՈՒ ՅՈՐՔ

ԹՀՀՀ-ն պառակտել է Ամերիկայի հայկական համայնքը

Սկիզբը էջ 1

«ԹՀՀՀ-ն ակնհայտորեն պառակտել է Ամերիկայի հայկական համայնքը, ինչը, հավանաբար, ԱՄՆ պետդեպարտամենտի եւ Թուրքիայի ուզածն է: Ամերիկահայերի մեծ մասը չի աջակցում, հավանություն չի տալիս հանձնաժողովին, սակայն, այնուամենայնիվ, ԹՀՀՀ-ի գոյությունը իսկ տարաձայնություններ է առաջացրել համայնքում, ինչը մեր քաղաքական բընամիների ցանկությունն է», մեզ հետ զրույցում ասաց Քենեթ Հաչիկյանը: «Ձեր կարծիքով, պատմական Անկարայի՝ ԹՀՀՀ-ի գործունեությանը հավանություն տալը միտվա՞ծ է հանձնաժողովը որպես գործիք օգտագործելու ընդդեմ Հայոց ցեղասպանության միջազգայնորեն ճանաչմանը: Եթե այո, ապա կարո՞ղ եք դա փաստարկել», «Ազգի» այս հարցին ԱՀԱՀ-ի նախագահը տվեց հետեւյալ մեկնաբանությունը. «Ակնհայտորեն, ԱՄՆ պետդեպարտամենտն այդպես է կարծում: Ես ենթադրում եմ, որ պետդեպարտամենտի այդ կարծիքը ձեւավորվել է Թուրքիայի իրենց գործընկերների հետ աշխատանքի արդյունքում: Արդեն նախորդ շաբաթ եվրամիության ենթահանձնաժողովը փոխեց խոսակցության տոնը: Նախկինում եվրամիությունը Թուրքիայի մուտքն այդ կազմակերպություն պայմանավորում էր Ցեղասպանության նախապես ճանաչումով: ԵՄ ենթահանձնաժողովի նախագահը, Թուրքիայի նկատմամբ շեշտադրումների փոփոխությունն ակնարկելով, հղում արեց «Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի» գոյությանը: Հայաստանում ԱՄՆ արդեն նախկին դեսպան Մայքլ Լեմոնն ասում էր, որ «այս տարի Հայոց ցեղասպանության բանաձեւ չի լինի»: Ես ինքս ինձ հարցնում էի՝ ինչո՞ւ է նա այդպես կարծում»:

Ամերիկայի հայկական ազգային հանձնաժողովը (ANCA) ԱՄՆ հայկական երկու խոշորագույն կազմակերպություններից մեկն է, մասնաճյուղեր ունի ԱՄՆ հայաշատ մի քանի տասնյակ քաղաքներում: Երկրորդ հայկական խոշոր կազմակերպությունը, որը, քաղաքագետ Անդրանիկ Միհրանյանի պնդմամբ, «լուրջ կարեր ունի ԱՄՆ պետդեպարտամենտի հետ», Ամերիկայի հայկական համագումարն է: Նախնական պայմանավորվածության համաձայն, մոտակա օրերին «Ազգին» հարցազրույց կտա ԱՀԱՀ-ի տնօրենների խորհրդի նախագահ, հայկական կողմից ԹՀՀՀ-ի անդամ Վան Գրիգորյանը:

Ի դեպ, ԱՄՆ հայկական ազդեցիկ շրջանակներին մոտ կանգնած աղբյուրները համառորեն պնդում են, որ ԱՀԱՀ-ն Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում ընդունելի է համարում «պատմական դեպքերը պատմաբանների դատին թողնելու» մոտեցումը՝ հակառակ ԱՀԱՀ-ի, որը հայ-թուրքական երկխոսությունն ընդունելի է համարում այն դեպքում, եթե Թուրքիան կանխավ ճանաչի Հայոց ցեղասպանությունը, վերջ տա Հայաստանի տնտեսական շրջափակմանը, ԼՂ հարցում փոխի իր ադրբեջանամետ կեցվածքը: ԱՀԱՀ-ին մոտ կանգնած աղբյուրները հիշում են, որ դեռեւս 1992 թ. Սոիտակ տանը կազմակերպված հանդիպման ընթացքում ԱՀԱՀ-ի հոգաբարձուների խորհրդի նախագահ Հայր Հովնանյանը նախկին նախագահ Բուշի կառավարության բարձրաստիճան պատասխանատուներին ասել է, որ «Հայոց ցեղասպանությունը քաղաքական հարց չէ, այլ՝ պատմաբանների ուսումնասիրության խնդիր»: 1996 թ. հունիսին ԱՀԱՀ-ն որեւէ ձեւով չի աջակցել Ռադանովիչ-Բոնյոր ուղղմանը, որը ենթադրում էր կրճատել ԱՄՆ-ի օգնությունը Թուրքիային, քանի դեռ վերջինս մերժում է Հայոց ցեղասպանությունը: ԱՀԱՀ-ին մոտ կանգնած աղբյուրները պնդում են, որ 2000 թ. հուլիսի 12-ին ԱՀԱՀ-ն առանձին հանդիպել է Ներկայացուցիչների պալատի խոսնակ Դենիս Հաստերթի հետ եւ քննարկել այն հարցը, թե «ինչու Հայոց ցեղասպանության ճանաչումը չպետք է դառնա Կոնգրեսի քննարկման թեմա»:

«Իրանը եւ ԱՄՆ-ը բալետ են պարում»

Չնայած Իրանի հոգեւոր առաջնորդ Ալի Խամենեին դատապարտել է Աֆղանստանի ամերիկա-բրիտանական ռմբահարումները, իսկ նախագահ Մոհամադ Խաթամին դրանք դադարեցնելու կոչ արել, քանի որ «մարդկային աղետի» պատճառ են դառնում, Թեհրանի եւ Վաշինգտոնի տեսակետները որոշ հարցերում համընկնում են, հոկտեմբերի 16-ի առաջնորդող հոդվածում գրում է «Նյու Յորք թայմսը»: Թերթը, հղում անելով ԱՄՆ բարձրաստիճան մի պատասխանատուի, գրում է, որ հոկտեմբերի 8-ին, ամերիկա-բրիտանական ռմբահարումներից մի քանի ժամ անց պատասխանատու Թեհրանը գաղտնի նամակ է հղել ԱՄՆ իշխանություններին, խոստանալով, թե «դժբախտ պատահարների դեպքում Իրանը կօգնի ամերիկյան զինվորներին»: Անանուն պատասխանատուն ասել է, որ Թեհրանից ստացված գաղտնի նամակը պատասխանն էր նախօրեին Վաշինգտոնի հղած գաղտնի ուղերձի, որում «Վաշինգտոնը Իրանի իշխանություններին հավաստիացրել է, որ կհարգի Իրանի տարածային ամբողջականությունը, չի խախտի երկրի օդային սահմանը»: «Նյու Յորք թայմսը» հիշեցնելով, որ ԱՄՆ-ը Իրանին համարում է ահաբեկչությունը պետական մակարդակով հովանավորող երկիր, ժամանակավորապես աչք է փակել, եւ իրանական հովանավորությունը ստացող «Հզբոլլահը», «Համասը», «Պաղեստինի իսլամական ջիհադը» չեն ընդգրկվել Վաշինգտոնի հռչակած ահաբեկչական կազմակերպությունների շարքում:

«Ինչպե՞ս է լինում, որ միաժամանակ բընամական հարաբերություններ ունենք Իրանի եւ Իրաքի հետ: Դա անմտություն է», ասել է ԱՄՆ պաշտպանության գերատեսչության ղեկավար Դ. Ռամսֆելդը:

«Նյու Յորք թայմսը» հիշեցնում է, որ 1991 թ. Ծոցի պատերազմի ժամանակ Իրանը չի միացել բազմազգ դաշինքին, սակայն ԱՄՆ-ին հղած գաղտնի ուղերձում հավաստիացրել է, որ հումանիտար աղետի դեպքում օգնության ձեռք կմեկնի ամերիկացի զինվորներին:

Իրանի ազդեցիկ Պահապան խորհրդի քարտուղար Մոհսեն Ռեզաին բրիտանական «Ֆայնենշլ թայմս» թերթին տված հարցազրույցում ասել է. «Եթե ամերիկացիները ընկղմվեն աֆղանական ճահճի մեջ, ապա կզգան Իրանի օգնությունը»:

Հիշեցնենք, Իրան-ԱՄՆ հարաբերություններն այնքան բընամական են, որքան Իրան-Թալիբան հարաբերությունները:

Վերլուծաբանների կարծիքով՝ Վաշինգտոն-Թեհրան հարաբերությունների կարգավորումը կթուլացնի Հարավային Կովկասում առկա լարվածությունը: Ենթադրվում է, որ Իրան-ԱՄՆ հարաբերությունների կարգավորումից Հայաստանը որոշ օգուտներ կքաղի, քանզի Իրանի հետ ունենալով բարեկամական կապեր, պատասխանատու Երեւանը երբեմն ստիպված է լինում ենթարկվել Վաշինգտոնի ճնշումներին:

Թ. Հ.

Սաուդցի նախարարը քննադատում է ԱՄՆ-ին

Սեպտեմբերի 11-ից հետո առաջին անգամ Սաուդյան Արաբիան պատասխանատու դատապարտեց իր դաշնակից ԱՄՆ-ի գործողություններն Աֆղանստանում: Սաուդցիների ներքին գործերի նախարար Նայեֆ բեն Աբդել Ազիզը հայտարարեց, որ ամերիկյան օդուժի հարվածներից տուժում են «անմեղները»: «Աֆղանստանի ժողովուրդը մեղավոր չէ ԱՄՆ-ում տեղի ունեցածի համար: Անշուշտ, մենք բնավ գոհ չենք այս վիճակից», շարունակեց նախարարը:

Նյու Յորքի եւ Վաշինգտոնի ահաբեկչությունները Սաուդյան Արաբիան դատապարտել էր եւ ԱՄՆ-ի կազմած հակաահաբեկչական դաշինքին միանալու ցանկություն հայտնել: Բայց վերջին օրերին ամերիկացիները քննադատությունների տարափ էին տեղում Սաուդյան Արաբիայի վրա, որն իբր ֆինանսավորում է ահաբեկիչներին եւ անբավարար չափով գործակցում Վաշինգտոնի հետ: Սեպտեմբերի 11-ի դեպքերի առնչությամբ մինչեւ օրս բազմաթիվ սաուդցիներ են հարցաքննվում ԱՄՆ-ում: «Ամերիկացիները պնդում են, թե «Ալ Ղաիդայի» ֆոնդերի մեծ մասն ստացվում է Սաուդյան Արաբիայից, թեեւ դա դեռ ապացուցված չէ», գրում է «Ֆիգարո» թերթը:

Կիրակի օրը «Նյու Յորք թայմսի» խմբագականում խստիվ դատապարտվել էր Սաուդյան Արաբիայի դիրքորոշումն ահաբեկչության հարցում: «Էր Ռիադի համաձայնությամբ Սաուդյան Արաբիայի փողերը եւ բնակիչները նպաստում են բեն Լադենի ահաբեկչական կազմակերպության գործունեությանը», գրել է ամերիկյան թերթը, ավելացնելով, որ սաուդցիները «մերժեցին բեն Լադենի եւ նրա ընկերների հաշիվները սառեցնելու Վաշինգտոնի կոչերը»:

Թեեւ Սոիտակ տունը պնդում է, թե «շատ գոհ» է Սաուդյան Արաբիայի հետ գործակցությունից, «Նյու Յորք թայմսի» խմբագականը լրջորեն սրում է նավթ արդյունահանող խոշորագույն երկրի եւ աշխարհի հզորագույն տերության փոխհարաբերությունները:

ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՔԱՍՏԵՐ

Բեն Լադենի 12 միջուկային ճամպրուկները

Իսրայելական «Դեբկաֆայլ» համակարգչային կենտրոնի տվյալները վկայակոչելով՝ «Ուտրո» թերթը գրում է, որ Ուսամա բեն Լադենը վերջին տարիներին 40-75 մլն դոլար է ծախսել հարստացված ուրանի ձեռքբերման համար: Իհարկե, տվյալները մասամբ հիմնված են ենթադրությունների վրա, բայց կան նաեւ հավաստի փաստեր:

Ընթացիկ տարվա սեպտեմբերի 2-ին իսպանական «Իբերիա» ավիաընկերության օդանավը հարկադիր վայրէջք կատարեց Իսպանիայի հարավում՝ Մալագայի օդանավակայանում: Տասնյակ ուղեւորներ վիրավորվեցին եւ հիվանդանոց տեղափոխվեցին: Գրեթե անմիջապես հիվանդանոց այցելեցին իսպանական, բրիտանական եւ ամերիկյան հետախուզական ծառայությունների ներկայացուցիչներ: Նրանք գտան եւ կալանքի տակ առան բեն Լադենի 32-ամյա կապավորին: Ենթադրվում է, որ հենց նա էր զբաղվում միջուկային հարցերով, հայթայթում եւ տարբեր ուղիներով իր առաջնորդին առաքում միջուկային նյութեր: Կապավորը գործում էր գլխավորապես Մալագայում եւ ծովափնյա այլ բնակավայրերում: Այստեղ է հանգիստն անցկացնում Սաուդյան Արաբիայի թագավորական ընտանիքը: Այդ վայրերում նաեւ գործում են լրտեսական խոշորագույն կենտրոններ:

Արեւմուտքի հատուկ ծառայություններին սեպտեմբերի 11-ից առաջ էլ հայտնի էր, որ ահաբեկիչներն ունեն հարստացված ուրանի զգալի քանակություն, եւ որ հիշյալ 40-75 միլիոնով ձեռք է բերվել 12-15 կգ ուրան-235: Հայտնի էր նաեւ, որ այդ ուրանն արտադրվել է Ռուսաստանում կամ Կենտրոնական Ասիայի մահմեդական պետություններից մեկում: Մինչեւ վերջերս մեկ ատոմային ռումբի արտադրության համար պահանջվում էր մոտ 9 կգ ուրան-235: Բայց երկրաչափական հատուկ համակարգերի օգտագործման շնորհիվ նոր տեխնոլոգիաները թույլ են տալիս ռումբ արտադրել 3-4 կգ հարստացված ուրանով:

1993 թվականից բեն Լադենը միջուկային նյութերի ձեռքբերման փորձեր է արել: Ըստ որոշ տվյալների, ներկայումս նրա տրամադրության տակ կա խորհրդային արտադրության մի քանի միջուկային ճամպրուկ: 1970-ական թթ. ՊԱԿ-ի արտաքին քաղաքական ձեռնարկումների համար թողարկվել էր 132 միջուկային ճամպրուկ: Դրանցից 48-ը վերահսկողության տակ են, իսկ 84-ի տեղն անհայտ է: Իսրայելական հիշյալ աղբյուրը պնդում է, թե վերջիններից 12-ը հայտնվել են բեն Լադենի ձեռքին: Ինչ վերաբերում է Մալագայում բռնված կապավորին, նա այդպես էլ ոչինչ չպատմեց, իսկ ազատ արձակվելուց հետո անհետացավ արեւմտյան հատուկ ծառայությունների տեսադաշտից:

«Դեբկաֆայլի» տվյալներով, բեն Լադենի միջուկային զինանոցի մասին խոսել է նաեւ Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն՝ վերջերս ԱՄՆ կատարած այցի ժամանակ: Նա ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշին զգուշացրել է Աֆղանստանում ամերիկացիների ծրագրած ռազմական գործողությունից առաջ: Շեւարդնաձեի իրազեկությանը դժվար է կասկածել: Նա անցյալում եւս Վրաստանի ղեկավարն է եղել, իսկ Խորհրդային Միության փլուզումից առաջ ԽՍՀՄ արտգործնախարարն էր եւ Աֆղանստանից խորհրդային զորքերի դուրսբերման նախաձեռնողներից մեկը:

ՀՂԲ-ն դժվարանում է գտնել մանրէների հետքը

Մոտ երկու շաբաթ է անցել Ֆլորիդայի «Սան» թերթի խմբագրատանը սիբիրախտի մանրէի հայտնաբերումից, որն իսկական գլուխկոտրուկ է դարձել ԱՄՆ-ի իշխանությունների համար: Երկուշաբթի երեկոյան Նյու Յորքի քաղաքապետ Ռուդոլֆ Ջուլիանին հայտարարեց, որ ABC հեռուստաընկերության աշխատակցի 7-ամսյա մանկիկը, որը վարակվել է սիբիրախտի մաշկային ձեւով, ABC-ի գրասենյակում էր եղել սեպտեմբերի 28-ին՝ այնտեղ կազմակերպված մի տարեդարձի առթիվ: Բայց հետաքննությունների դաշնային բյուրոն չի կարողանում պարզել, թե երեխան ինչպես է վարակվել:

Վերջին օրերին ՀՂԲ-ն փորձում է ինչ-որ կապ գտնել ԱՄՆ-ում սիբիրախտով մարդկանց հիվանդանալու դեպքերի եւ բեն Լադենի ահաբեկչական խմբերի գործունեության միջեւ: Սակայն իշխանությունները խոստովանում են, որ ոչ մի կոնկրետ ապացույց չունեն. կան միայն բազմաթիվ կանխավարկածներ: Քննիչները մեծ կարեւորություն են տալիս այն փաստին, որ Նյու Յորքում NBC հեռուստաընկերության եւ Վաշինգտոնում դեմոկրատ սենատոր Թոմ Դաշի ստացած մանրէակիր նամակներն ուղարկվել են սեպտեմբերի 18-ին Թրենթոնից (Նյու Ջերսիի նահանգ): Սեպտեմբերի 11-ի դեպքերի քննությունից հայտնի է, որ օդահենների վազն 6-ը բնակվել են Նյու Ջերսիում:

Երեքշաբթի օրը ՀՂԲ-ն հայտարարեց, որ հիշյալ երկու ծրարների վրայի ձեռագրերը միանման են, թեեւ դա դեռ չի նշանակում, թե միեւնույն մարդն է գրել: Քննությունն անչափ դժվարանում է այն պատճառով, որ Թրենթոնի փոստատանը հավաքվում են 46 ուրիշ քաղաքների նամակներ: Ապացուցված չէ նաեւ Ֆլորիդայում ամռանը բնակարան վարձած երկու օդահենների կապը «Ալ Ղաիդայի» ուրիշ անդամների հետ:

ՀՂԲ-ի գլխավոր խնդիրներից մեկը սիբիրախտի մանրէների հետքի բացահայտումն է: Բնական վիճակում դրանք բազմանում են հողում եւ վարակում որոշող կենդանիներին եւ հազվադեպ՝ մարդկանց: Փորձագետների կարծիքով, ԱՄՆ-ում հայտնաբերված մանրէները լաբորատոր ծագում ունեն: Դրանք «խստացված են եւ որոշ ֆեսիոնալ ձեւով մշակված»: Սակայն չափազանց դժվար է գտնել մանրէների հետքը: «Լիբերասիոն» թերթի տվյալներով, ներկայումս նման մանրէներ պահվում են աշխարհի շուրջ 60 երկրների 1500-ից ավելի լաբորատորիաների զեստեղարաններում, բայց այնքան էլ լավ չեն պատսպարվում: Մինեսոտայի համալսարանի տարափոխիկ հիվանդությունների հետազոտման կենտրոնի տնօրեն Մայքլ Օստերհոլմը խոստովանում է, որ հենց ԱՄՆ-ում մանրէների հաշվառումները չեն բացառվում:

Նման պայմաններում ամերիկացիները հնարավոր են համարում երկրների միջեւ սիբիրախտի մանրէների գաղտնի առեւտրի գոյությունը: Օրինակ, ԱՊՀ հանրապետություններ որոշ գիտնականներ կարող էին դրանք վաճառած լինել Իրաքին, Իրանին, ԿԺԴՀ-ին: Չնայած քիմիական եւ մանրէական պատերազմներն արգելող 1972 թ. միջազգային գոյությանը, Մոսկվան մինչ ԽՍՀՄ-ի փլուզումը շարունակում էր գաղտնի հետազոտությունները:

Ամիսներ առաջ **«Ազգն»** անդրադարձավ ամերիկյան մամուլի այն բացահայտումներին, որոնց համաձայն ԱՄՆ-ի 3 վայրերում մինչեւ օրս էլ գործում են մանրէական գաղտնի լաբորատորիաներ: Ղազախստանում փակվելիք մի քիմիական գործարանում ամերիկացի գիտնականների խումբն անցյալ շաբաթ հայտնաբերեց սիբիրախտի մանրէներ:

ՊԵՏՐՈՍ ԲԵՐԲԵՐՅԱՆ

Ներկայացված է ՀՀ պետական մրցանակի

Երկիր իջնող երգեր

Արմեն Մարտիրոսյանի «Ժամերգություն» ժողովածուն

Դոգիս խորհուրդ առավ, երբ կարդացի Արմեն Մարտիրոսյանի «Ժամերգությունը»: Բանաստեղծի հոգու աչքով տեսած խաղաղն ուրիշ է: «Ամեն աղոթքանի խաղաղն արքնանում է մաքուր ու սրտի տակ խանձարուրում եւ լվացվում է առավոտվա ցողաթաթախ ժամերգությամբ, եւ անուշահոտ ծիքայուղով օծվում է, եւ հասունանում ինչպես երեխա... Եվ պատարագ են մատուցում արեգակն ու լուսինն անվերջ»: Ահա սա է Ավետյաց երկիրը, որ երազով տեսնում է պոետը, այն երկիրը, որ Տերյանն ու Չարենցը եւ մինչ այդ մեր պատմության հեռուներում կոչել են Նաիրյան. «...Ես մանկան նման այս աշխարհ եկա եւ մանկան նման գնալու եմ, Տեր, բայց Դու ինձ ասա, թե ինչի համար է մնում անելու Արքայությանը հասնելու համար»: Չկարծեն, թե բանաստեղծը երկրայինից, մարմնականից վերանալով, մոռանում է երկիրն ու մարմնականը: Բնավ այդպես չէ: Նրա բաղձանքն ու բարձրանալն իր անձի փրկության համար չէ, ինչպես որ չի մոռանում ցածում «Առանց օդի խեղդվող» եւ «Առանց լույսի խարխափող» եղբայրներին. «Մայրիները ծանր են, մեղմանման ծանր, /Եւ նրանց մեջ ապրող հոգիները՝ հիվանդ եւ բանտարկյալ, անկարող են արդեն առաջնորդել: ...Տեղա, իմ բառ, տեղա եւ տաք, եւ ջերմացնող իմ շուրթերի ծաղկուն թերթիկներին արեգակ է սառել»: ...Օրը ցերեկով կորցնում եմ իմ դիմագիծը, գիշերը գտնում երազների մեջ... Չախ եմ թեքվում, ճեղքեր անբուժելի, անբուժելի վերքեր աջ ու ահյակ՝ վրան մոռացության մոխրի շեղջեր: /Կյանքը շղթայակապ, մահը շղթայազերծ... /Հերիք է, բաց թողնեմ պատուհանը հոգուս, /Հոգեշունչ ժամ է եւ արքնացման, իմ պահապան ասպը երեք անգամ կանչեց: ...Եվ թաղվածը, ավաղ, խորն է թաղված, եւ մեռածը, ավաղ, շատ է մեռած: ...Ալիքը բերեց, ալիքը տարավ հավերժությունը: ...Եվ օրերը նույնն են, երեխաներ են դեռ չծնված, եւ ժամանակը միամիտ երեխա է: /Իմ կորուստներն ինձ այցելում են երազներ դարձած: /Ժամերգության պահ է, ինչերթք զանգերը լված զանգակատան: ...Իմ օրհնության միջով քայլում են երեխաները եւ մանկության դարպասները բաց են ապագայի առջեւ»: Հիրավի, այս իսկ բանաստեղծություններով հնչում են զանգերը լված զանգակատան եւ լսելի է դառնում անապատում կանչողի ձայնը. «Աղաչխարեցեք, աղաչխարեցեք, ուղղեցեք Տիրոջ ճանապարհները»:

Այո, երկրային անարգ, անաստված պատերազմի դեմն առնելու համար երկնային ուժեր են հարկավոր: Ուրիշ ճանապարհ չկա, քանի որ. «Այս պատերազմն ամենից սարսափելին է, ոսկու եւ փառքի պատերազմը մարմնական միամիտ ու աղքատ հոգիների դեմ, երբ ոգու սով է շուրջը համատարած... /Այս պատերազմն ավելի սարսափելի է, քան պարսիկի, թուրքի, Հռոմի դեմ կռվելը, երբ եկեղեցիները շատ են բնակելի տներից եւ թագավորները զինվորականներից շատ են, եւ հրամանները տրվում են առանց կասարողի»: Արդյոք սա միայն ներկա օրերի ցա՞նքն է եւ հո՞ւնձքը, այդ ե՞րբ, ե՞րբ աճեցին, ինչպե՞ս, ինչո՞ւ աճեցին հոգեւոր ու մարմնական այս մահահոտ պտուղները: Եզրքիս է ու ճշմարիտ Արմեն Մարտիրոսյանի պատասխանը. «Մեր անցյալի ծովում ուռկաններ կան ցավի, իբրեւ դժոխային վերջին մի պարունակ, որ խառնում են խաղաղ ալիքները ծովի այս էլ հազար տարի եւ շարունակ»: Ծնվող օրվա հետ եւ օրվա մեջ, աշխարհի արարման ժամին, ծնվում է բանաստեղծությունը եւ ջրերի վրա շրջող քամին, որ Սուրբ Հոգին է, հովանին ու հովանավորն է բանաստեղծության: Այնուհետեւ տեղի է ունենում փառաբանություն. «Լուսաբացի գունաս դեմի վրա երգում է դեղձանիկը առավոտվա սաղմոս, եւ մարդը երգում է առավոտվա սաղմոս: /Ուժ տուր իմ թեւերին,- երգում է դեղձանիկը. /Լույս տուր իմ խոհերին,- երգում է մարդը: Անձրեւը երկար ճառագայթներով սրիտակ, լույս է ասեղնագործում դաշտերի վրա, հասկերը դեղին թիկնոցների մեջ, աղերսում են լույս»: Սա սկիզբն է, ծնունդը, մնացյալը կրկնություն է, հավիտենական ընթացք դեպի այս սկիզբ կոչվող Անսկիզբը. «Բառերը գնում են դեպի մանկություն, եւ մարդիկ գնում են դեպի մանկություն: /...Եվ հիշողության զգեստի միջով թափվում է անձրեւը մանկության: ...Երազանքների շուրթերի վրա համբույրի նման կաթում է մի երգ»: Ահա այդ մի երգն է, որ մշտահոլով ընթացքով պտտվում է, արյան հետ մտնում Արմեն բանաստեղծի սիրտը եւ արյան ձայնով հնչեցնում է հավիտենության մեղեդին:

Ոչ միայն իբրեւ պոետ, այլ իբրեւ մարդ առանձնանում է Արմենը: Մի առանձին զուրգուրանք ունի երկրային ծնողների հանդեպ: Եվ քանի որ ինքը երկնի եւ երկրի երախտագետ երեխան է մնում, ասպի, արեւի, ծաղկի ու ծովի, թռչունների հետ նրա արդար շուրթին երգ են դառնում եւ երգի մեջ, երգի հետ ապրելու երանություն են առնում հայրն ու մայրը: Ապրում է պոետը հավատն իր մեջ եւ ինքն իր հավատի մեջ. «Մայրս արքնանում է աղոթքանից առաջ, եւ ինձ թվում է, թե լույսն ինքն է բացում... /Մայրս մանկություն է հավերժորեն ներկա, եւ թե ծերմակում եմ, ես եմ լոկ ծերմակում: /Մայրս կլվանա իմ շորերը նորից իր մարության փոքրիկ առվակի մեջ... /Առանց քեզ, մայր իմ, ասա, ուրիշ որտե՞ղ գտնեմ ես կոհակվող լույսի փոքրիկ մի Մեղրագետ»: Ահա հավիտենական մի հարց, որ երեխա մնացած բոլոր որդիները տալու են մայր մնացած մայրերին: Սիրո նույն ակունքից է բխում Արմենի նաեւ հայրականը:

Եվ ազգայինն էլ այս բանաստեղծություններում հանդես է գալիս ոչ թե որպես սնափառության բեռ, այլ որպես մշտահոլովի մաս-մարմին, որպես ողողանք տիեզերական: Արմենի երգերը ոչ թե մարմնավոր մարդու իմաստությամբ են արժեքավոր, այլ հմայիչ են Հոգու ներգործությամբ: Եվ քանի որ դա այդպես է, որքան էլ փորձենք ինքնել նրա բանաստեղծությունը, հոգու մասով, անքննելի է մնում: Արյան բաղադրությունը, ինչ խոսք, կարելի է իմանալ, մինչդեռ արյան ձայնը, արյան կանչը, արյան աղաղակը սեւով սրիտակի վրա տեսանելի, շոշափելի դարձնել չի լինի: Նույնիսկ շնորհված նկարիչը կդժվարանա նկարել Արմենի այն գնչուին, որի «ոտքերից կաթկթում են հոգնած ճամփաները»: Ասելիքը, լեռներից իջնող ջրի նման, գտնում է իր հունը, որ այս դեպքում բանաստեղծական ձեւն է: Նա վստահորեն ձեռը զարկել է բանաստեղծական չափ ու ձեւերին, ժանրերին, մասնավորապես փոքրամարմին կտավներին, երբեմն քանդելով նրանց դասականի օրենքներով կարգված արտաքին շրթաները. կարեւորը տողերի հանգավանկերը չեն, այլ այն կրակն է, որ նրա հոգու երկնքում փայլատակում է կայծակի լույսի մարությամբ՝ երկրին բաշխելով բանաստեղծությամբ հայտնված երկնային խորհուրդը: Այստեղ նա ցավից ծնվում է ուրախության համար եւ միեւնույն պահին էլ տրտմում է ասվածորեն: Արմենի երգը հաց է դառնում, իսկ ձեռը եղբայրաբար մարում է կենդանության Քարի վրա իջած ժամանակավորի փոշին եւ որպես մի նոր գանգրահեր տղա իր ձայն-լեզվով կարդում է հավիտենականի գիրը. «Բանաստեղծ՝ ծնված Մակու քաղաքում»: Կարդում եւ շշնջում է. «...Բայց ինչո՞ւ դու ուշացար, Արմեն, չէ՞ որ բոլորը, ինչը մարգարիտ է, բանաստեղծները հանել են ծովից»: Ահա իմ ասելիքը «Ժամերգություն» բանաստեղծությունների ժողովածուի եւ նրա հեղինակ Արմեն Մարտիրոսյան բանաստեղծի մասին: Մնացյալն աչք, ականջ եւ խոնարհություն ունենալու խնդիր է:

ՀԱԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՆԱԹԱՆ

Հայկական վանքերն ու եկեղեցիները Իրանում

Ավ. Իսահակյանի անվ. քաղաքային գրադարանում քրիստոնեության 1700-ամյակին նվիրված նիստը կազմակերպվել էր հայրենադարձ իրանահայերի մշակութային միության եւ գրադարանի հետ համատեղ: Միության ստեղծման պատմության եւ գործունեության մասին բացման խոսքում տեղեկություններ հաղորդեց միության նախագահ, արվեստի վաստակավոր գործիչ Երվանդ Մանարյանը: Ընդարձակ զեկուցումով հանդես եկավ պրոֆ. Ջանի Միրզաբեկյանը՝ «Հայկական վանքերը եւ եկեղեցիները Իրանում» թեմայով: Վերլուծելով իրանահայության պատմական անցյալը եւ ներկա կացությունը՝ զեկուցողն Իրանահայ գաղութի ամբողջական նկարագրություն տալու հավակնություններ չուներ եւ պատմական համառոտ ակնարկ կատարեց: Չնայած դեռեւս վաղ ժամանակներից Իրանում կային հայկական բնակավայրեր, բայց իրանահայ գաղութը ձեւավորվել է XVII դարից, երբ Շահ Աբասի հայանպաստ քաղաքականության հետեւանքով հայերը հնարավորություն ունեցան կառուցելու վանքեր ու եկեղեցիներ, հիմնելու դպրոցներ, պարբերականներ: Իրանահայ գաղութը կայուն համայնքներով (Նոր Ջուղա, Թավրիզ, Թեհրան, Շիրազ) սկսեց լայն գործունեություն ծավալել, եւ հատկապես Նոր Ջուղան դարձավ առեւտրատնտեսական կենտրոն: Իրանահայությունը ուրույն դեմքով ինքնուրույն միավոր է եւ ըստ զեկուցողի սփյուռքահայություն չէ: Հայրենիքի հետ մշտապես եղել է մշակութային տնտեսական կապի մեջ՝ Իրանում այսօր գործող իրանահայ գրողների, համալսարանականների, «Արարատ» մարզամշակութային եւ այլ միություններով:

Բանախոսը չէր սահմանափակվել միայն պատմական աղբյուրները ուսումնասիրելով. 1994-ից պարբերաբար լինելով Իրանում այցելել է հայկական վանքերն ու եկեղեցիները, եւ նրա զեկուցումը ականատեսի վկայություն էր նաեւ: Ջանի Միրզաբեկյանը հանգամանորեն ներկայացրեց Իրանի (հատկապես Ատրպատականի, որ հարուստ է հարյուրավոր սրբատեղիներով) հայկական վանքերն ու եկեղեցիները, անդրադարձավ նրանց պատմությանն ու ճակատագրին (հին հեթանոսական սրբավայրի եւ, ըստ ավանդության, Վարդան Մամիկոնյանի թաղման տեղում կառուցված Սբ. Թադեի, առաջին անգամ գրավոր աղբյուրներում 1314 թ.-ից հիշատակվող Ծործորի Սբ. Աստվածածին վանքերին, XVII դ. Սբ. Ստեփանոս վանքային համալիրին եւ այլն):

Իրանի տարածքում կառուցված սրբավայրերը՝ եկեղեցիներն ու վանքերը հայկական ճարտարապետության գոհարներից են, որոնք մեզ են հասել դարերի խորքից դժվարությամբ եւ այսօր առավել կարոտ են խնամքի եւ պահպանման:

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԲԱԴԱԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔ

Երբ մարդն իր տեղում է

Ավագանին եւ համայնքի հիմնախնդիրները

Վերջերս առավել հաճախ է խոսվում տեղական ինքնակառավարման բնագավառի բարեփոխումների, այդ թվում դրա համակարգում գործող ավագանու դերի մասին: Այդ առիթով անդրադարձանք «Երեւանի ավագանիներ» հասարակական միության փոխնախագահ, Արաբկիրի համայնքի ավագանու ներկայացուցիչ Աշոտ Մովսիսյանի գործունեությանը: Իր ընդհանուր նկարագրով այն ամփոփում է համայնքի ավագանի հասկացությունը:

«Ինձ ավելի հոգեհարազատ են մշակույթի, կրթության ոլորտները, այդ է պատճառը, որ իմ, որպես ավագանու անդամի գործունեությունը հիմնականում ընդգրկվում է հիշյալ բնագավառների օբյեկտները», ասում է Աշոտ Մովսիսյանը: Իսկ երբ խնդրում եմ մատնանշել առաջը, ո՛չ ձեւական համեստությամբ պատասխանում է. «Ես ընդամենը գործին ի նպաստ դնում եմ օրենքով սահմանված ավագանու լիազորությունները: Մարդիկ այնքա՜ն են վարժվել անտարբերությանը, որ անգամ փոքր բարերարությունը եւ օգնությունը որպես արտառոց բան են ընկալում»:

Տեղեկանալու նպատակով, թե որքանով է այն «փոքր» եւ ինչպիսին է այս ամենի մասին բնակիչների կարծիքը՝ այցելեցինք Արաբկիրի համայնքի մի շարք օբյեկտներ: Սկսում ենք ամենատխրահռչակից, որի անվանումն իսկ ցավալի զուգահեռների տեղիք է տալիս. «Կորեայի ծոր»... Ոչ, այստեղի բնակիչները «Կորեայի որբերը» չեն, այլ համայնքի տարածքում բնակվող մի քանի հարյուր մարդ: Վերջերս է Պետրոս Դուրյանի անունով կոչված միջնակարգ դպրոցի փոքրիկ տարածամասում ծվարել թիվ 208 մսուր-մանկապարտեզը: Սա համայնքի, թերեւս, ամենածանր գոտին է՝ քաղաքից մեկուսացված, զրկված քաղաքային տրանսպորտից, գերազանցապես աշխատազուրկ, չքավոր բնակիչներով: Մանկապարտեզի վարիչ Սուսաննա Մկրտչյանը պատմում է. «Դժվար է պատկերացնել, ինչ կլիներ մեր վիճակը, եթե չլիներ Աշոտ Մովսիսյանի միջամտությունը: Ջանք չխնայելով, նա սատար է կանգնում մանուկներին. հայթայթում նյութական միջոցներ, լուծում վերանորոգման, կահույքի, կենցաղային բազում այլ հարցեր. հոգում է հագուստի եւ ամանորյա նվերների խնդիրները... Բացի այդ, մեր ամբողջ տարածքի առանց այդ էլ ծանրագույն վիճակում գտնվող ընտանիքների երեխաները ընդհանրապես կզրկվեին մսուր եւ մանկապարտեզ հաճախելուց, եթե Աշոտ Մովսիսյանի հետեւողական միջամտությամբ հաճախման ամենամսյա վարձը 2500 դրամից չնվազեցվեր 1500-ի»:

«Աշոտ Մովսիսյանը մեր օջախի բարերարն է ամենալայն առումով: Մարդ, որը չի՛ սպասում իրեն խնդրեն. նա նրբանկատորեն տեսնում է ամեն ինչ հոգու աչքերով: Վերանորոգում, շինարարական աշխատանքներ, նյութական օժանդակություն չքավոր ընտանիքների երեխաներին, նվերներ՝ հագուստ, խաղալիքներ: Այս ամենը լուծելու համար բարի սիրտ եւ կազմակերպչական աշխատանքի ծիրք պետք է ունենալ», ասում է մեկ այլ՝ թիվ 56 մսուր-մանկապարտեզի վարիչ Գոհար Գալստյանը: Եվ ավելացնում է. «Այն, որ երեխաները այստեղ են գալիս վերջապես ասֆալտապատված ճանապարհով՝ նույնպես Աշոտ Մովսիսյանի տրացավ վերաբերմունքի արդյունքն է»:

Այցելում եմ նաեւ համայնքի լավ պայմաններում գտնվող «Արաբկիր» (թիվ 38) մսուր-մանկապարտեզ: Մեծ, կանաչազարդ տարածք, սպորտի եւ խաղահրապարակներ՝ տարբեր տարիքի խմբերի համար: Բարվոք է նաեւ շենքի վիճակը: Վարիչը՝ Լաուրա Հայրապետյանը, շեշտում է. «Մենք ենք ընտրել մեր համայնքի ավագանու կազմը եւ չենք սխալվել: Կյանքն ապացուցել է՝ ինչը չեն անի իշխանավոր այրերը, կանի մեր ավագանին, հանձինս Աշոտ Մովսիսյանի եւ նրա նմանների»:

Եղանք նաեւ համայնքի մի շարք դպրոցներում. «Թեպետ այս կրթօջախները քաղաքապետարանի ենթակայության տակ են, այնուամենայնիվ համայնքի ավագանու անդամ Աշոտ Մովսիսյանը հաճախ է այցելում մեզ եւ օգնում հնարավոր չափով»:

«Արաբկիր համայնքի ավագանու կազմում 15 հոգի են: Պատահական մարդ չպետք է եւ չի էլ կարող լինել: Հասարակական այս աշխատանքի սկզբունքը՝ տրացավությունն է: Այս իսկ առումով արդարացի է նշել բոլոր անդամների անունները. ամեն մեկն իր ուժերի ներածի չափով ծառայում է ընդհանուր գործին: Ավագանին, անշուշտ, համագործակցում է համայնքապետ Ֆելիքս Յայլոյանի հետ: Վերջինիս աշխատանքն արդարացիորեն դրվատանքի է արժանի: Այլ հարց է, որ կան ոչ դյուրին խնդիրներ, որոնք, վստահ եմ, ժամանակի ընթացքում կգտնեն իրենց լուծումը», ասում է Աշոտ Մովսիսյանը:

Արդ, կարելի է նշել, որ համայնքում ոչ սակավաթիվ բարեփոխումներ իրագործող ղեկավարն իր կողքին ունի գործին նվիրյալ մարդիկ, որոնք ջանք չեն խնայում հնարավորինս թեթեւացնելու բնակչության ծանր վիճակը: Նրանցից մեկը՝ Աշոտ Մովսիսյանն է: Մարդ, որն իր տեղում է:

ԹԱՄԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԾԱՂՐԱՆԿԱՐԴԻ ԱՇՔԵՐՈՎ



ԱՇԽԱՐՀԻ ԹԻՄԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Առաջատարը կրկին հայ շախմատիստներն են

Շախմատի աշխարհի թիմային առաջնությունում պայքարը մրցանակային տեղերի համար գնալով ավելի թեժ բնույթ է կրում: Առաջատարների շարքում նեղվածք է, եւ յուրաքանչյուր հաջող կամ անհաջող ելույթ կարող է կտրուկ փոխել թիմերի մրցաշարային իրավիճակը:

Նախորդ տարում կրած անհաջողությունից հետո հայ շախմատիստները երեկ կրկին վստահ ելույթ ունեցան՝ 3-1 հաշվով հաղթելով Կուբայի հավաքականին: Մեր թիմին հաղթական միավորներ պարգեւեցին Վահանյանն ու Լպուտյանը, որոնք համապատասխանաբար պարտության մատնեցին Վերային եւ Արենչիբիային: Հակոբյան-Դոմինգես եւ Ասրյան-Դելգադո պարտիաներում մրցակիցները խաղաղ դաշն կնքեցին: Այս հաղթանակի շնորհիվ Հայաստանի հավաքականը կրկին ստանձնեց առաջատարի դերը: Սակայն մեր շախմատիստներին կրնկակոխ հետապնդում են Ռուսաստանի եւ Ուկրաինայի հավաքականները, որոնք իրենց ակտիվում 3,5-ական միավոր գրանցեցին: Ռուս շախմատիստները վրեժխնդիր եղան գերմանացիներից նախորդ տարում հայերի նկատմամբ տոնած հաղթանակի համար: Ուկրաինացիների մրցակիցն առաջնության եռնադահ Իրանի հավաքականն էր: Անակնկալ մատուցեց Մակեդոնիայի հավաքականը՝ հաղթելով Ուզբեկստանի շախմատիստներին: Ի դեմ, այսօր 7-րդ տուրում մեր հավաքականը կմրցի ուզբեկ շախմատիստների հետ:

Ահա 6-րդ տուրի մրցախաղերի համառոտ վիճակագրությունը.

Ռուսաստան-Գերմանիա՝	3,5-0,5
Սվիդլեր-Յուսուպով՝	1-0
Դրեեւ-Լուցց՝	0,5-0,5
Գրիշչուկ-Գրաֆ՝	1-0
Ռուբլեւսկի-Լյութեր՝	1-0
Իրան-Ուկրաինա՝	0,5-3,5
Մաղամի-Իվանչուկ՝	0,5-0,5
Ղորբանի-Էյնգորն՝	0-1
Դարբան-Ռոմանիշին՝	0-1
Նադաֆ-Մալախատկո՝	0-1
Մակեդոնիա-Ուզբեկստան՝	2,5-1,5
Նեդեւ-Սաֆին՝	1-0
Բոգդանովսկի-Յուլդաշեւ՝	0,5-0,5
Ստամենկով-Վահիդով՝	0,5-0,5
Ստոյանովսկի-Ջումաեւ՝	0,5-0,5

Մրցաշարային աղյուսակ

1. Հայաստան	15 (20)
2. Ռուսաստան	14,5 (20)
3. Ուկրաինա	14,5 (20)
4. Գերմանիա	14 (24)
5. Կուբա	11,5 (24)
6. Ուզբեկստան	10 (20)
7. Հունգարիա	8 (20)
8. Մակեդոնիա	4,5 (20)
9. Իրան	4 (24)

«Ռեալն» աղաղակեց հաջորդ փուլի ուղեգիրը

Մրցաշարի անհաջողակներն առաջին հաղթանակները տոնեցին

Մեկնարկեց չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի երկրորդ շրջանը: Առաջինը մրցավեճի բռնվեցին «A», «B», «C» եւ «D» խմբերում ընդգրկված թիմերը: Երկրորդ շրջանի մեկնարկային տուրը հատկանշական էր նրանով, որ նախ ժամկետից շուտ հայտնի դարձավ հաջորդ փուլի առաջին մասնակիցը՝ Մադրիդի «Ռեալը», ապա առաջին հաղթանակները տոնեցին խմբերի ետնապահներ «Լացիոն» եւ «Շալկե-04»-ը:

«A» խմբում հանդես եկող Մոսկվայի «Լոկոմոտիվի» եւ իտալական «Ռոմայի» հանդիպումից առաջ տեղի ունեցած մամուլի ասուլիսում հյուրերի գլխավոր մարզիչ Ֆաբիո Կապելոն հայտարարել էր, որ թիմը մրցավայր է ժամանել հաղթելու նպատակով: Իտալացիները հավատարիմ մնացին խոստմանը, թեեւ հաղթական միակ գնդակը խփեցին մրցակցի օգնությամբ: 78-րդ րոպեին Կաֆուի հարվածից հետո գնդակը դիպչելով Չերեւչենկոյի ոտին, փոխեց ուղղությունը, եւ դարպասապահ Նիգմատուլինը հանկարծակիի եկավ:

«Ռոմայի» հետ հանդիպումը «Լոկոմոտիվը» վատ չանցկացրեց, սակայն այդպես էլ չկարողացավ արդյունքի հասնել: Իրեն հիանալի դրսեւորեց «Ռոմայի» դարպասապահ Ֆրանչեսկո Անտոնիոլին, որն իր թիմին փրկեց վերահաս գոլերից, երբ հարվածային դիրքերում հայտնվեցին Պիմենովն ու Լեկսետոն: «Լոկոմոտիվը» դեռեւս որոշակի հույսեր է փայփայում խմբում 3-րդ տեղը գրավելու եւ ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկությանը մասնակցելու համար: Դրան նպաստեց «Անդերլեխտի» պարտությունը «Ռեալից»: Վերջինս թեեւ իր ուժեղագույն կազմով հանդես չէր գալիս, սակայն 2 անպատասխան գնդակ խփեց եւ ժամկետից շուտ վճռեց հաջորդ փուլ դուրս գալու խնդիրը:

Կրկին անհաջող խաղացին Կիեւի դինամոյականները, որոնք «Լիվերպուլին» պարտվելուց հետո 3-րդ տեղի աննշան հնարավորություններ ունեն: Չնայած անհաջողությանը, Վալերի Լոբանովսկին մամուլի ասուլիսում իր գոհունակությունն է հայտնել թիմի խաղի որակից եւ խաղացողների մարտունակությունից, նշելով, որ «Դինամոն» պարտվեց եվրոպական բարձրակարգ թիմից: Գլխավոր մարզիչը նաեւ նշել է, որ այժմ իրենց նպատակն աղագայի համար ուժեղ ֆուտբոլային կոլեկտիվի ստեղծումն է, որի համար ֆուտբոլիստներին շատ անհրաժեշտ է միջազգային խաղերի զգալի փորձ կուտակել:

«Բորուսիայի» ֆուտբոլիստները կամային հաղթանակ տոնելով «Բոավիստայի» նկատմամբ, բավական սրեցին իրավիճակը «B» խմբում:

«C» խմբում գրանցվեց գլխավոր անակնկալը: «Շալկե-04» ակումբը, որը մինչ այդ տանուլ էր տվել բոլոր խաղերը, հյուրընկալվելիս 4-0 հաշվով պարզապես ջախջախեց «Մայորկային»: Խմբի առաջատար «Պանաթինաիկոսը» էլ անդրանիկ պարտությունը կրեց՝ մրցակցի դաշտում զիջելով «Արսենալին» (1-2):

«D» խմբում «Լացիոն» վերջապես հաղթեց 2-1 հաշվով՝ առավելության հասնելով «Էյնդհովենի» նկատմամբ, իսկ «Գալաթասարայն» ու «Նանտը» խաղն ավարտեցին ոչ-ոքի: Այս խմբում էլ պայքարը դեռ առջեւում է:

Խաղերի արձանագրություններից

«A» խումբ

«Անդերլեխտ»-«Ռեալ»՝ 0-2 (0-2)
Ռաուլ (19), Մակմանաման (34)
«Լոկոմոտիվ»-«Ռոմա»՝ 0-1 (0-0)
Կաֆու (78)

«B» խումբ

«Բորուսիա»-«Բոավիստա»՝ 2-1 (0-1)
0-1՝ Գուլար (33), 1-1՝ Ռիկկեն (50), 2-1՝ Կոլլեր (68)
«Դինամո» Կ.-«Լիվերպուլ»՝ 1-2 (0-1)
0-1՝ Մերֆի (43), 1-1՝ Գիոանե (59), 1-2՝ Ջերարդ (67)

«C» խումբ

«Արսենալ»-«Պանաթինաիկոս»՝ 2-1 (1-0)
1-0՝ Անրի (23), 1-1՝ Օլիսադեբե (50), 2-1՝ Անրի (52՝ 11 մ)
«Մայորկա» -«Շալկե-04»՝ 0-4 (0-2)
Հոգդալեմ (15), Խայտ (22՝ 11 մ), Ասամոա (77), Սանդ (84)

«D» խումբ

«Լացիո»-«Էյնդհովեն»՝ 2-1 (1-0)
1-0՝ Ֆիորե (39), 2-0՝ Կլաուդիո Լոպես (55՝ 11 մ), 2-1՝ Կեժման (56)
«Գալաթասարայ»-«Նանտ»՝ 0-0

«A» խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Ռեալ	4	4	0	0	12-2	12
2. Ռոմա	4	2	1	1	4-3	7
3. Անդերլեխտ	4	0	2	2	2-7	2
4. Լոկոմոտիվ	4	0	1	3	2-8	1

«B» խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Լիվերպուլ	4	2	2	0	4-2	8
2. Բոավիստա	4	2	1	1	7-5	7
3. Բորուսիա	4	1	2	1	5-5	5
4. Դինամո	4	0	1	3	4-8	1

«C» խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Պանաթին.	4	3	0	1	6-2	9
2. Արսենալ	4	2	0	2	5-5	6
3. Մայորկա	4	2	0	2	2-6	6
4. Շալկե-04	4	1	0	3	6-6	3

«D» խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Նանտ	4	2	1	1	7-3	7
2. Գալաթաս.	4	2	1	1	3-3	7
3. Էյնդհովեն	4	2	0	2	6-7	6
4. Լացիո	4	1	0	3	3-6	3

ՆՈՐ ԳԻՐՔ

Ջրացատկի ասողը

Մարզական գրականությունը համալրվեց եւս մեկով. լույս է տեսել վաստակաշատ գիտնական, մարզիչ-մանկավարժ, մի շարք գրքերի եւ ուսումնամեթոդական ձեռնարկների հեղինակ Մարտին Արամի Օսյանի «Ջրացատկի ասողը» գիրքը, որը նվիրված է հայկական սպորտի վառ ասողերից մեկին՝ ջրացատկորդ Դավիթ Համբարձումյանին, որը թեկուզ հոլանցիկ, ներկայացված է այլ մեծությունների ասողաբույլում: Այս գիրքը յուրօրինակ հարգանքի տուրք է Դավիթ Համբարձումյանի պայծառ հիշատակին: Գրքի հրատարակմանն օժանդակել է «Քեզ համար, Հայաստան» կանանց հանձնախմբի Հալեպի մասնաճյուղը, որն առաջինն արձագանքեց սույն գործի հովանավորության առաջարկին:

Գրքի հերոսը տաղանդաշատ Դավիթ Համբարձումյանն է՝ իր մարզական նվաճումներով: Հեղինակը հանգամանորեն ներկայացրել է անվանի մարզիկի անցած մարզական ողջ ուղին՝ ընթերցողին ծանոթացնելով Դավիթ Համբարձումյանի մարզական նվաճումների ողջ ցանկին միութենական եւ միջազգային մրցաստարեզներում: Բերված են նաեւ մեր մյուս ջրացատկորդների ցուցանիշները, ինչը հնարավորություն է ընձեռում համեմատություններ կատարել, եւ ավելի ցայտուն է արտահայտում Դավիթ Համբարձումյանի մարզական տաղանդը: Մի խոսքով, այս գիրքը բազմաբովանդակ փաստերով ու թվերով, բացատրություններով ու գնահատականներով, հետաքրքիր տվյալներով հարուստ, յուրօրինակ մի աշխատություն է, որում համառոտ ներկայացված են նաեւ 12 անհատական մարզաձեւերում փայլած հայ մարզիկների նվաճումները:

Հեղինակը համաչափակ ձեւով ներկայացրել է Դավիթ Համբարձումյանի ոչ միայն մարզական սխրանները, այլեւ, որ ամենակարեւորն է՝ նրա մարդկային լավագույն հատկանիշները: Գիրքն իր տեսակի մեջ կարեւոր ու հետաքրքիր ձեռնարկ է: Հուսանք, որ այսօրինակ աշխատություններ կստեղծվեն նաեւ այլ մարզաձեւերի հայ աշխարհահռչակ մարզիկների մասին:

ՖՈՒՏԲՈԼ

Հայ ֆուտբոլիստների անհաջող մեկնարկը

Ֆուտբոլի Հայաստանի մինչեւ 19 տարեկանների պատանեկան հավաքականը (գլխավոր մարզիչ՝ Ալբերտ Սարգսյան) անհաջող սկսեց Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարը՝ Ցյուրիխում 0-4 հաշվով պարտվելով Շվեյցարիայի պատանիներին: Այսօր մրցակիցները կանցկացնեն 2-րդ հանդիպումը: Ընտրական մրցաշարի մյուս երկու խաղերը հայ ֆուտբոլիստները կանցկացնեն հոկտեմբերի 23-ին եւ 26-ին Իսպանիայում՝ տեղի հավաքականի հետ:

Մալոֆեեւը գլխավորեց Մինսկի «Դինամոն»

Ֆուտբոլի Բելառուսի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Էդուարդ Մալոֆեեւը ստանձնել է Մինսկի «Դինամոյի» գլխավոր մարզչի պաշտոնը: Լրագրողների հետ հանդիպման ժամանակ Մալոֆեեւն անբավարար է գնահատել հավաքականի ելույթը, որն ընտրական 5-րդ խմբում գրավեց 3-րդ տեղը: «Դինամոյի» նախագահ Յուրի Չիժը հայտարարել է, որ ինքը դեմ չէ Մալոֆեեւի կողմից երկու պաշտոնների համատեղմանը: Հիշեցնենք, որ 1982 թ. Էդուարդ Մալոֆեեւի գլխավորությամբ Մինսկի «Դինամոն» հասել է իր ամենամեծ հաջողությանը՝ նվաճելով ԽՍՀՄ չեմպիոնի կոչումը:

Ի դեմ, Մալոֆեեւով հետաքրքրվում էր նաեւ Մոսկվայի «Դինամոն», որն առաջարկել էր գլխավորել թիմը: Սակայն Մալոֆեեւը նախընտրեց հարազատ ակումբը:

Էդուարդ Մալոֆեեւը հրաժարականի դիմում է ներկայացրել Բելառուսի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Գրիգորի Ֆյոդորովին: Դիմումն ընդունվել է, բայց առայժմ պատասխան չկա: Հավանաբար, ֆեդերացիան Մալոֆեեւի հետ էլ նույն կերպ վարվի, ինչպես ժամանակին վարվեց երիտասարդական հավաքականի գլխավոր մարզիչ Յուրի Պունտուսի հետ՝ դիմումն ընդունեցին, սակայն խնդրանքը մերժեցին:

ԹԵՆԻՍ

Հյուիթը շարունակում է հաղթարշավը

Շտուտգարտում ընթացող թենիսի խոշոր մրցաշարում հաջող է հանդես գալիս ԱՄՆ-ի բաց առաջնության չեմպիոն ավստրալացի Լլեյթոն Հյուիթը: 2-րդ շրջանում նա պարտության մատնեց չեխ Բոգդան Ուլիգրաֆին (3-6, 6-3, 6-4): Դա Հյուիթի 15-րդ անընդմեջ հաղթանակն էր: Հյուիթը ներկայումս դասակարգման ցուցակում 3-րդն է, սակայն Շտուտգարտում հաղթող ճանաչվելու դեպքում կարող է դառնալ աշխարհի թիվ 1 թենիսիստը, քանի որ առաջատարը՝ Գուստավո Կուերտենը դուրս մնաց հետագա պայքարից՝ զիջելով Մախիմ Միրնուն: Հաջորդ փուլ են դուրս եկել նաեւ Գորան Իվանիշեւիչը, Թիմ Հենմանը, Ուեյն Ֆերեյրան:

ՖՈՐՄՈՒԼԱ-1

Շումախերը ռեկորդներ է սահմանում

«Ֆորմուլա-1» դասի ավտոմրցավազքի աշխարհի բազմակի չեմպիոն Միխայիլ Շումախերն հաղթանակով ավարտելով Ճապոնիայի «Մեծ մրցանակի» խաղարկությունը, մրցաշրջանն ավարտեց առաջին տեղում, իր տիտղոսների թիվն ավելացնելով եւս մեկով: Միաժամանակ, նա սահմանեց մի քանի ռեկորդ: Դրանցից գլխավորը մարզական գործունեության ընթացքում վաստակած միավորների քանակով ֆրանսիացի Ալեն Պրոստին պատկանող ռեկորդի գերազանցումն էր: Շումախերը միավորների ընդհանուր քանակը հասցրեց 801-ի, իսկ Պրոստի ակտիվում գրանցված է 798,5 միավոր: Այնուհետեւ, Շումախերը 4-րդ անգամ հաղթող ճանաչվեց Սուզուկայի ավտոմրցավազքում: Ճապոնիայում միայն Այրտոն Սեննային, Դեյմոն Հիլին եւ Միկա Հակինենին էր հաջողվել 2 անգամ հաղթող ճանաչվել:

Ընդհանուր հաշվարկով 2-րդ եւ 3-րդ տեղերի համար համառ մրցավեճ էր ծավալվել Ռուբենս Բարիկելոյի եւ Դեւիդ Կուլտհարդի միջեւ, որն ավարտվեց վերջինիս օգտին: Բարիկելոն ստիպված էր բավարարվել 3-րդ տեղով:

Բաժինը վարում է ԱՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հետքերով

ԵՐՈՒՍԱՂԵՄ

«Հայաթ» հյուրանոցում սպանվել է Իսրայելի տուրիզմի նախարարը

Երեկ, վաղ առավոտյան Երուսաղեմի «Հայաթ» հյուրանոցում երկու անհայտ անձանց կրակոցներից մահացել է Իսրայելի տուրիզմի նախարար Ռեհավամ Զեեւին, որի նախարարի պաշտոնից ազատման հրամանագիրը ստորագրվելու էր կեսօրին:

Ինչպես Իսրայելի մյուս նախարարները, Զեեւին շրջել է առանց թիկնապահների, անզեն: Նախարարի կինը նրան գտել է միջանցքում վիրավորված գլխից եւ վզից: Հիվանդանոց տեղափոխելուց 3 ժամ անց նախարարը մահացել է:

Ըստ նախնական տվյալների, հյուրանոցի աշխատողները գերազանցապես Արեւելյան Երուսաղեմի բնակիչներ են եւ դեռ հետո անմիջապես հրավիրվել են հարցաքննության: Ռեհավամ Զեեւի անունն ընդգրկված է եղել Ինթիֆադայի ղեկավարած կազմակերպությունների մի քանի ամիս առաջ տարածած ցուցակում, ուր նշված են եղել Իսրայելի այն նախարարների անունները, որոնք դատապարտված են սպանության: Ֆրանսիական լրատվական գործակալությունը հայտնել է, որ Պաղեստինի ազատագրման ժողովրդական ճակատն է ստանձնում սպանության պատասխանատվությունը:

Հաղորդագրության մեջ նշվել է, որ դա պատասխան է Իսրայելին երկու ամիս առաջ Ռամալլայում Պաղեստինի ժողովրդական ճակատի ղեկավար Աբու Ալի Մուստաֆային ոչնչացնելու համար:

Պաղեստինի ղեկավարությունը երեկ ցավակցել է Իսրայելի կառավարությանը եւ խնդրել, որ կատարվածը չդառնա իրավիճակի վատթարացման գործոն եւ շարունակվեն բանակցությունները:

Բրիտանիայի արտգործնախարարը ցավակցություն է հայտնել Պերեսին եւ ասել, որ նախարարի սպանությունը ցնցել է Բրիտանիայի կառավարությանը: Պերեսը նշել է, որ եթե Արաֆաթը չկրի իրադարձության կայունացման ողջ պատասխանատվությունը, ապա լարվածությունը տարածաշրջանում կդառնա պայթյունավտանգ:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Ռուսաստանի ադրբեջանցիները համախմբվում են

Մոսկվայի «Պրեզիդենտ-հոթելում» տեղի ունեցավ Համառուսաստանյան ադրբեջանական կոնգրեսի համագումարը: Կոնգրեսը ստեղծվել է անցյալ տարվա հունիսին Հեյդար Ալիեւի անմիջական մասնակցությամբ ու օրհնությամբ: Ռուսաստանում ադրբեջանական «սփյուռքի» գոյությունը իրողություն է, եւ ճիշտ չի լինի անտեսել այդ փաստը, պատճառաբանելով, թե այդ հանրությունը զուտ բազարածին է: Համենայն դեպս, Մոսկվայում ադրբեջանցիները մտավորական խավ ստեղծել են, որի կարմիր (կամ կանաչ) դուռը ըստ երեւույթին «ԼՈՒԿՕՅԼ» նշանավոր նավթային կոնցեռնի նախագահ Վագիտ Ալեքպերովն է:

Ինչքան էլ որ գեղագիտական լինեն կոնգրեսի հռչակած նպատակները՝ զարգացնել ռուս-ադրբեջանական բարեկամությունը, տարածել ադրբեջանական ժողովրդի մշակութային եւ մարդասիրական ավանդույթները եւ այլն, հասարակական այդ կազմակերպությունն ըստ էության միսված է միավորելու Ռուսաստանով մեկ փոված ադրբեջանական «էքսոսը», ոչ պաշտոնական տվյալներով, ադրբեջանցիների թիվը Ռուսաստանում հասնում է մոտ 3 միլիոնի: Սա արդեն լուրջ երեւույթ է: Կոնգրեսի նախագահ Մահմեդ Ալիեւի տվյալներով, 1991 թվականից Ռուսաստանում ստեղծվել են 149 ադրբեջանական ազգային ընկերություններ, որոնք միավորված են 47 տարածային կազմակերպություններում: Անշուշտ, ադրբեջանական զանգվածի գերակշիռ մասի գործունեության օբյեկտը շուկաներն են, որոնք այդ երկրում լրիվ վերահսկվում են նրանց կողմից: Բայց, ինչպես արդեն ասվեց է եղել գրելու, ադրբեջանցիներն այսօր ստր ու տնտեն են նաեւ բազմաթիվ ռեստորանների, սրճարանների, խաղատների, խանութների, բազաների եւ այլն: Ավելացնենք նաեւ թմրամիջոցների վաճառքը, եւ պարզ կդառնա, որ ադրբեջանցիները Ռուսաստանում էական տնտեսական ուժ են եւ վաղ թե ուշ իրենց քանակական ու առեւտրական կարողությամբ կարող են դառնալ ազդեցիկ քաղաքական՝ լոբբիստական ուժ: Ի դեպ, ըստ ռուսական մամուլի տվյալների, Ադրբեջանն իր ռուսաստանյան հատվածից տարեկան ստանում է մոտ 1,5–2 մլրդ դոլար: Կարելի է համոզված ասել, որ դա «ներարկումների» տոկոս երեւացող կողմն է:

Համագումարը հեղեղված էր գեղեցիկ ու շաբլոն ելույթներով: Ամերիկյան ողբերգության ֆոնի վրա կոչեր էին հնչում ուժեղացնելու պայքարն «ահաբեկչության» դեմ, տարբերակելու սրիկա ահաբեկիչներին եւ խաղաղասեր մուսուլմաններին եւ այլն: Սակայն արժե ուշադրություն դարձնել կոնգրեսի առջեւ ծառացած հիմնական խնդրի վրա՝ պայքարել (ոչ ավել, ոչ պակաս) ադրբեջանական համայնքի իրավունքների համար, որոնք ամենուրեք ոտնահարվում են միլիցիայի եւ իշխանության մյուս մարմինների կողմից:

Համագումարը ողջունել էին Վլ. Պուտինը, Ալեքսիյ II-ը, Հեյդար Ալիեւը եւ ուրիշներ: Բայց համակովկասյան եզակի համերաշխության դրսեւորման տեսակետից ամենատպավորիչը թերեւս Ռուսաստանի ժողովուրդների ասամբլեայի նախագահ Ռամազան Աբդուլատիպովի արտահայտությունն էր, որը բառախաղի առկայության պատճառով կարելի է մեջբերել միայն ռուսերեն. «Когда нас называют лицами кавказской национальности, мы должны с гордостью отвечать- у нас хотя бы есть лицо»:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Մոսկվա

Մի-էն-էն-ը պատասխանատու է բեն Լադենի պատասխանատուներին

ԱՍԼԱՆՏԱ, 17 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ: Մի-էն-էն հեռուստաընկերությունը մոտ ժամանակներս, հնարավոր է, ստանա այն հարցերի պատասխանները, որոնք ուղղվել են «թիվ մեկ» միջազգային ահաբեկիչ Ուսամա բեն Լադենին: Մի-էն-էն-ի հաղորդավար Վոլֆ Բլիթցերը հաղորդել է, որ հարցազրույց կազմակերպելու առաջարկությունը հեռուստաընկերությանն արվել է անցած շաբաթվա վերջին՝ Քաբարի «Ալ-Ջազիրա» արբանյակային հեռուստալիքի միջնորդությամբ: Ըստ Բլիթցերի, Մի-էն-էն-ի բեն Լադենի համար պատրաստած հարցերը ուղարկվել են «Ալ-Ջազիրային», սակայն երբ եւ ինչ ձեւով կստացվի պատասխաններով տեսաժապավենը՝ հայտնի չէ:

Մի-էն-էն-ին, մասնավորապես, հետաքրքրում է, թե ո՞րն է բեն Լադենի դերը ԱՄՆ-ում սեպտեմբերի 11-ի անխնդրելի ահաբեկչությունների կազմակերպման եւ դրան հաջորդած «սիբիրյան խոցի» մանրէների օգտագործմամբ «փոստային գրոհների» մեջ, ինչպես նաեւ՝ ինչ զինատեսակներ կան նրա կազմակերպության տրամադրության տակ եւ ինչ ձեւով է նա մտադիր դրանց հետ վարվել:

«Ուղարկելով մեր հարցերը, մենք որեւէ երաշխիք չենք տվել, որ եթեր կհեռարձակենք բեն Լադենի պատասխանները, նշել է Բլիթցերը: Մենք կնայենք ժապավենը եւ կորոշենք, թե որքան շատ կամ որքան քիչ ցուցադրենք»: Ըստ նրա, հեռուստաընկերությունը պատրաստ է անվճար բեն Լադենի պատասխանների ժապավենը տրամադրել բոլոր շահագրգիռ լրատվամիջոցներին՝ իրենց հայեցողությամբ այն օգտագործելու իրավունքով:

MELMAX Ltd

«ՄԵԼՄԱՔՍ» ընկերության երեւանյան գրասենյակն առաջարկում է հետեւյալ ծառայությունները.

1. Գտնել եւ տեղեկություններ հայտնել Ձեր հարազատների կորած գերեզմանի մասին:
2. Անհրաժեշտության դեպքում նորոգել, բարեկարգել, կանաչապատել, խնամել Ձեր հարազատների գերեզմանները:
3. Հարազատների պատվերով ծաղիկներ եւ ծաղկեպսակներ դնել նրանց գերեզմաններին՝ ծննդյան, մահվան, տարեդարձերի կապակցությամբ կամ եկեղեցական ծիսական օրերին:
4. Տեղեկություններ հավաքել կորած հարազատների գտնվելու վայրի մասին եւ կապ հաստատել Ձեզ հետ:

Մեր հասցեն՝
Հայաստանի Հանրապետություն, Երեւան 37, փ. Բաբայան 36/19
Հեռ. (374 1) 256-822, (374 1) 549-231, (374 9) 410-091
Ֆաքս. (374 1) 288-496
էլ. փոստ: mhakobyan2001@yahoo.com

Աշխատանքի հրավեր

Պահանջվում է փականագործ-հավաքող (слесарь-сборщик) IV-VI կարգի: Դիմել հետեւյալ հասցեով՝ Նորքի V զանգված, Միկոյան 17, հեռ. 64-29-40, 64-24-67, մինչեւ ժամը 18:00-ը:

Ուշադրություն

«Հայմամուլ» ընկերությունը սկսում է 2002 թ. Հայաստանի Հանրապետությունում, ԱՊՀ երկրներում եւ արտասահմանում լույս տեսնող պարբերականների բաժանորդագրությունը:

Գներն ամենաէժանն են հանրապետությունում, սպասարկումը՝ բարձրակարգ, վճարումը՝ ցանկացած ձեւով:

Տեղեկությունների համար զանգահարել 45-82-00, 45-82-56, 45-30-78 հեռախոսահամարներով:

Armex

Հայաստանի Ֆոնդային Բորսա
Armenian Stock Exchange

ԺՈՒԺԱԿՎԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՆԱՆՇՈՒՄ

2001 թ. հոկտեմբերի 17-ի առեւտրային նստաշրջան

Թողարկող Issuer	Հատ. ABBR	Դարձակ Listed	Պահանջարկ* Bid: Լավագույն գին Best price	Պահանջարկ* Bid: Միջ. կշռ. գին Avg. price	Պահանջարկ* Bid: Ընդհանուր Total գին	Առաջարկ* Ask: Լավագույն գին Best price	Առաջարկ* Ask: Միջ. կշռ. գին Avg. price	Առաջարկ* Ask: Ընդհանուր գին	Կատարված գործարքներ Transactions: Գին Day low	Գին Day high	Միջին կշռված գին Avg. price	Փոփոխություն Avg%	Ծավալ (հազ. դրամ) Volume
ԱՐԴՎԻՆ ԷԼ.ՄԵԽ.ԳՆ (ՎԱՆԱՁՈՐ)	ARDV	B											
ԱՐՇԱԼՈՒՅՍ	ARSL	B											
ԱՐՏԵՔՍ	ARTX	B											
ԱՍՊԱՍԵՎԱՆ	ASEV	B											
ՍՏԵԿԼՈՄԱՇ (ԱՐԹԻԿ)	ASTM	B											
ԱՎՏՈԱԳՐԵԳԱՏՆԵՐԻ ԳՆ	AVAG	B											
ԱՎԻԱՀԱՄԱԼԻՐ	AVHM	B	90.0	90.0	500								
ԱՎՏՈԲԵՌԻՉ	AVTB	B											
ԱՎՏՈՄՍՏԻԿԱ ԳՆ	AVTM	B											
ԲԵԼՍՊԼԱՋՄԱ	BHSP	B											
ԿԱՊԻՏԱԼ ՄԵՆԵՋՄԵՆԹ	CPMT	B	600.0	600.0	2								
ԴԱԼԻՋԱՆԻ ԱՐՏ. ՋՐ. ՄԿ	DAJK	B											
ԴԱՍՏԱԿԵՐՏԻ ԲՈՒԺՏԵԽ. ԳՆ	DBJG	B											
ԴԱԼԻՋԱՆԻ ԱՌՈՂՋ. ՀԼ	DJAH	B											
ՁՈՒԼԱԿԵՆՏՐՈՆ	DZKT	B	400.0	400.0	10								
ԷԼԵԿՏՐԱՇՇԳՈՐԾՍՍԱՐՔ	ECHS	B											
ԷՋՄԱՇԵՆԻ ԱԱՐՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՆ	ECSG	B											
ԵՐ. ԷԼԵԿՏՐԱՇԱՐԺԻՉՆԵՐԻ ԳՆ	EELJ	B											
ԵՐՖՐԵԶ	EFRZ	B	1,400.0	1,400.0	3								
ԵՐ. ՀԻԴՐՈՀԱՂՈՐԴԱԿ ԳՆ	EHHG	B											
ԵՐ. ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՆ	EJWG	B	85.0	85.0	20								
ԵՐԿԱԹԵՏՆ-7	EKB7	B	1,250.0	1,250.0	2								
ԵՐ. ԿԵՆՏԱՂԱՅԻՆ ՔԻՄԻԱՅԻ ԳՆ	EKQG	B	400.0	400.0	100								
ԷԼԵԿՏՐԱՍՊԱՐԱՏ	ELAP	B	470.0	470.0	10								
ԷԼԵԿՏՐԱՍՈՆՏԱժ	ELMJ	B											
ԵԿՎԱՐԻ ՍԱՐՉԱԿՈՒԻԿՆԵՐԻ Ֆ/Ա	EMKFC0	B	500.0	500.0	100								
ԷԼԵԿՏՐԱՄԵՔՔԱՌ	EMQR	B											
ԵՄԱՍ	EMTA	B											
ԷՋՄԱՇԵՆԻ ՊԼԱՍՏԱՍՍ ԳՆ	EPLG	B											
ԵՐ. ԺԱՄԱՆՈՒՅՑԻ ԳՆ	ERJG	B	1,350.0	1,349.3	29								
ԵՐԿԱԹԵՏՆ	ERKB	B	1,000.0	1,000.0	50								
ԵՐ. ՇԱՄՊԱՅՆ ԳԻՆԻՆԵՐԻ ԳՆ	ESHG	B	400.0	400.0	100								
ՄՆԱՀԻՆ ՑԵՆ. ԳՆ (ԵՐԵՎԱՆ)	ETCG	B	1,000.0	1,000.0	10								
ՎԱՆ Ա/Ֆ (ԵՐԵՎԱՆ)	EVAF	B											
ԵՐ. ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՆ - 1	EVGI	B	50.0	50.0	10								
ՄՆԻՎ	GANV	B											
ԳԵԳԱՄՍ	GGMA	B											
ԳՅՈՒՄՐԻ ՄՍԻ ՊԱՀԱՇՈՆԵՐԻ Կ/Տ	GMPG	B											
ՀԱՅԱԳՐՈԲԱՆԿ	HAGB	B											
ՀԱՇԻՉ	HASH	B	100.0	100.0	28,300								
ՀԱՏԻՍ	HATC	B											
ՀԱՅՇԽԱԽՈՏ	HATS	B	1,500.0	1,211.5	52								
Հ.Է.Ղ. ՀԱՅԱՍ ԳՐՈՒՊ	HEHG	B	450.0	450.0	10								
ՀԱՅՔԻՄՄԵՔԵՆԱ	HQMQ	B	1,000.0	1,000.0	3								
ՀԱՅՔ.ՀԻՆՆԱԽԱԳԻԾ	HSHN	B											
ԿԱՇԻ	KASH	B											
ԿԱՄՈՒՐՋՇԻՆ	KMSH	B											
ԿՈՆԱԿ	KNKA	B											
ՌԵԼԵ ԳՆ (ԿԱՊԱՆ)	KREL	B											
ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹ ԳՆ	MQER	B	2,500.0	2,428.0	15								
ՄԵՐՉԱՆՍԿԻՀԱՅԱՆ	MSKV	B											
ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ	MSTB	B	400.0	400.0	30								
ՄԵՏՇԻՆ	MTSH	B											
ՆՈՒԲԱՐԱՇԵՆԻ ՏՐԻԿՈՏԱԺԻ Ֆ/Ա	NBTF	B											
ՆԵՅՐՈՆ	NERN	B											
ՊԼԱՍՏԻԿ	PLAS	B											
ՌԵԶԻՍՏՈՐ	RZTR	B	825.0	817.2	3								
ՍԵԼԵՆԱ	SELN	B											
ՇԻԱՄԵՔԵՆԱՆՈՐՈԳԻՍ	SHMN	B											
ԿԱՏԱՐՈՂ ՍԱՐՔ. ԳՆ	SKSG	B											
ՏՈՍՊ	TASP	B											
ՏԱՎՐՈՍ	TAVR	B											
ՈՒԿՐՇԻՆ	UKSH	B											
ՍԽԱՅՈՒՎԱԾ ԲԱՆԿ	UNBK	B											
ՎԱՆՇԻԿ	VSHK	B											
ՎԻՏԱՄԻՆՆԵՐԻ ԳՆ	VTMG	B				8,000.0	8,000.0	1,000					
ԵՐԵՎԱՆ-ԿԱՌՈՒՅՑ	YKHQ	B											
ԵՐ. ՌԵԼԵԻ ԳՆ	YRLE	B											

*՝ Չբավարարված պահանջարկի/առաջարկի հայտերի մասին տեղեկություն առեւտրային նստաշրջանի փակման դրությամբ: Բոլոր գները ՀՀ դրամով:

© Armex

ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՆԱՆՇՈՒՄ

2001թ. հոկտեմբերի 17-ի առեւտրային նստաշրջան

Թողարկման համարը Issue number	Մարմնից մնացած տերմին մինչեւ մարումը Days till redemption	Առաջարկ Ask: Տարեկան եկամտաբերություն (%) (Լավագույն) Best Yield (%)	Առաջարկ Ask: Ծավալ (հազ. դրամ) Volume (tshd. drams): Ըստ առաջարկվող հայտի By quote	Առաջարկ Ask: Ծավալ (հազ. դրամ) Volume (tshd. drams): Ըստ անվանական արժեքի Face value	Պահանջարկ Bid: Տարեկան եկամտաբերություն (%) (Լավագույն) Best Yield (%)	Պահանջարկ Bid: Ծավալ (հազ. դրամ) Volume (tshd. drams): Ըստ առաջարկվող հայտի By quote	Պահանջարկ Bid: Ծավալ (հազ. դրամ) Volume (tshd. drams): Ըստ անվանական արժեքի Face value	Կատարված գործարքներ Transactions: Տարեկան եկամտաբերություն (%) Yield (%): Ցածրագույն Day low	Տարեկան եկամտաբերություն (%) Yield (%): Բարձրագույն /Day high	Տարեկան եկամտաբերություն (%) Yield (%): Միջին կշռված Weighted Averag	Միջին կշռված եկամտ. փոփոխություն (%) Ch. of WAY (%)	Կատարված գործարքներ Transactions: Ծավալ (հազ. դրամ) Volume (tshd. drams): Ըստ գործարքների Of trade	Կատարված գործարքներ Transactions: Ծավալ (հազ. դրամ) Volume (tshd. drams): Ըստ անվանական արժեքի Face value
AMGT3818F02	243				17.7	446.7	500.0						
AMGT4219B02	124				17.3	471.8	500.0						
AMGT3511F02	236	16.1	9,047.0	10,000.0	17.7	896.2	1,000.0						

Բացատրություն: AM - Հայաստան, G - Կառավարություն, T - կարճաժամկետ, հաջորդ 2 թվերը ցույց են տալիս թողարկման պահից օրացուցային ժամկետը տարիներով, հաջորդ վեցերը ցույց են տալիս մարման ժամկետը (օր. 09D - 09 ամսվա 1), վերջի երկու թվերը նշում են մարման տարին (02 - 2002 թ.): Գործարքի նվազագույն ծավալը 1000 դրամ:

© Armex

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 17.10.2001 Գինը՝ 100 դրամ